

**ՔԱՉՄԱՎԵԿՏՈՐ ԳԼՈՒԲԱԼԱՑՈՒՄ  
ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՔԱՈՍ  
Գազիկ Տեր-Հարությունյան**

Չնայած մենք ձգտում ենք կարգավորվածության,  
չի կարելի անհիմն մեղադրել անկարգավորվածությունը.  
այն խորհրդանշում է միաժամանակ ե՛լ վտանգ, ե՛լ ուժ:

*Մ.Դուզլաս*

Ընթացող համակարգային փոփոխություններն անխուսափելիորեն պետք է հանգեցնեն նաեւ որոշ արմատացած պատկերացումների վերինաստավորման: Դա վերաբերում է, օրինակ, այնպիսի հիմնարար հասկացության, ինչպիսին է գլոբալացումը, որը մտել է լայն շրջանառության մեջ նախորդ դարի վերջին եւ համարվում է աշխարհակարգային իրողությունները բնութագրող գլխավոր եզրերից մեկը:

Քաղաքական մեկնաբանությունների համատեքստում՝ լրատվամիջոցներում անհամեմատ պակաս է օգտագործվում «քաոս» եզրը (ավելի հաճախ, թերեւս, կարելի է հանդիպել «ղեկավարվող քաոս» բառակապակցությանը): Սակայն փորձագիտական գրականությունում այն նույնպես առանցքային է համարվում, քանի որ հաճախ հենց «քաոս» հասկացությունն է, որ թույլ է տալիս հնարավորինս ըմբռնել եւ մեկնաբանել մեր ժամանակաշրջանին բնորոշ բարդ երեւույթներն ու գործընթացները:

Վերոնշյալ հասկացություններին արդիական մեկնաբանություններ տալու ձգտումը, ըստ մեզ, արդարացված է եւ ակտուալ, քանի որ դա կարող է նպաստել ավելի համարժեք ընկալելու ներկայիս փոփոխությունները եւ հնարավորինս կանխատեսելու հետագա զարգացումները:

**Կայսերական գլոբալացում**

Ինչպես հայտնի է, գլոբալացումը չունի խիստ գիտական սահմանում, սակայն այդ եզրի տակ, որպես կանոն, հասկացվում է տնտեսական եւ այլ ոլորտներում ընթացող ինտեգրացիոն գործընթացների հետեւանքով աշխարհի երկրների փոխկապվածության աճը: Ենթադրվում է, որ գլոբալացման արդյունքում, հաշվի առնելով արդի հաղորդակցական եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները, ձեւավորվելու է միասնական տեղեկատվական տարածություն, որն իր հերթին

հանգեցնելու է միօրինակ աշխարհընկալմանը: Համարվում է նաեւ, որ գլոբալացման հիմնական նպատակներից է անկարգավորվածության նվազեցումը եւ կարգավորվածության մակարդակի բարձրացումը:

Նկատենք, որ գլոբալացման լոկալ արտահայտությունների հետ մարդկությունը շփվել է դեռեւս առաջին կայսրությունների գոյացման պահից: Հայտնի է, որ վերջիններս հանդիսանում են, մասնավորապես, տարբեր էթնոսների, մշակույթների եւ անգամ քաղաքակրթությունների խառնարան: Կայսերական քաղաքականության արդյունքում ձեւավորվում են որոշակի չափով ինտեգրված հանրություն, հնարավորինս միասնական օրենսդրական-տնտեսական դաշտ: Նման իրողության դասական օրինակ կարող է հանդիսանալ ԽՍՀՄ-ը, որի մասին հիշողությունները դեռեւս թարմ են: Ակնհայտ է, որ ցանկացած կայսրության «կառավարման կենտրոնի» առաջնահերթ քաղաքական խնդիրն է իրեն ենթակա տարածքներում միասնական խաղի կանոնների հաստատումը եւ հնարավորինս սոցիալ-տնտեսական համասեռության հաստատումը, քանի որ դա պետական համակարգի կայունությունն ու կենսունակությունն ապահովող հիմնական նախապայմանն է:

Կայսրության տեղեկատվական դաշտի ընդհանրությունը կախված է տվյալ ժամանակաշրջանում հաղորդակցական միջոցների զարգացման աստիճանից եւ, իհարկե, կայսերական ազգի կամ տարբեր ազգերի ինտեգրման արդյունքում ձեւավորված հանրության քաղաքակրթական ներուժից: Այս վերջին հանգամանքով է պայմանավորված կայսրության այսպես կոչված ժամանակային-տեղեկատվական (կամ այլ խոսքերով՝ նրա վերաբերյալ հիշողության) հարատեւումը: Օրինակ, հելլենիզմի դարաշրջանում եւ Հռոմեական կայսրությունում ձեւավորված մշակութային, քաղաքական, իրավաբանական եւ այլ ոլորտների ձեռքբերումները եւ հասկացություններն առայսօր շրջանառության մեջ են, ինչը դժվար է ասել հոնական կամ օսմանյան կայսրությունների պարագայում:

### **Գլոբալացում միաբեւեռ աշխարհում եւ «Քաոսի» կայսերական օգտագործումը**

Մեր ժամանակաշրջանի գլոբալացումը նույնպես զգալի չափով կառավարման «կայսերական» ձեւի արտահայտություն է: Միաբեւեռ համակարգում (այժմ արդեն նախկին) այդ գործընթացի գլխավոր «կարգավորողը» եւ «վերահսկողը» ԱՄՆ-ն էր: Տիրապետելով հսկայական ռեսուրսների՝ այդ տերությունը գերակայում էր բոլոր ոլորտներում, եւ գլոբալացումը, համաձայն ամերիկյան ընտրանու պատկերացումների, համաշխարհային կարգավորվածության ու անվտանգության ապահովման անհրաժեշտ միջոց էր: Միեւնույն ժամանակ, ամերիկյան դարաշրջա-

նի գլոբալացումը տարբերվում է անցյալի կայսրությունների գործառույթներից իր բարձր արդյունավետությամբ, ինչը պայմանավորված է տեղեկատվական ոլորտում տեղի ունեցած հայտնի հեղափոխական փոփոխություններով:

Հատկանշական է, որ ըստ ամերիկյան «ուղեղային կենտրոնների» հայեցակարգային մշակումների, գլոբալացվող դաշտից դուրս գտնվող երկրները համարվում են «չկայացած», եւ այդ տարածքներում գերակայում են «քառտիկ գործընթացները»: Նման իրադրությունը սպառնում է Միացյալ Նահանգների անվտանգությանը, այդ իսկ պատճառով «չկայացած» երկրների ներգրավումը համաշխարհային հանրություն համարվում է առաջնահերթ խնդիր:

Միեւնույն ժամանակ, «քառտիկ» իրավիճակները պարունակում են զգալի ներուժ, որի օգտագործումը եւ ուղղորդումը գլոբալ դերակատարի համար, ռազմաքաղաքական եւ տնտեսական առումով, կարող է շահավետ լինել: Այսինքն՝ «քառտիկ» տարածաշրջանները եւ հանրություններն իրենց ուրույն տեղն ու նշանակությունն ունեն աշխարհաքաղաքական գործընթացներում:

Բնորոշ է, որ այդօրինակ մոտեցումներն իշխում էին նաեւ անցյալում. օրինակ՝ հույները, հռոմեացիները եւ չինացիները «գլոբալացված» կայսերական սահմաններից դուրս ժողովուրդներին (ցեղերին) ընկալում էին որպես «բարբարոս» եւ նրանց խիստ վտանգավոր էին համարում իրենց տերությունների համար: Միեւնույն ժամանակ, կայսրությունը, ելնելով իր շահերից, հաճախ էր օգտագործում այդ «բարբարոսներին»: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ռազմաքաղաքական զարգացումների հետեւանքով «բարբարոսները» երբեմն ձեռք էին բերում կայսերական քաղաքակրթության ժառանգորդների եւ շարունակողների կարգավիճակ, ինչպես դա տեղի ունեցավ հռոմեական (արեւմտյան) կայսրության անկումից հետո: Այլ կերպ ընթացան զարգացումները բյուզանդական կայսրությունում, որի տարածքներին տիրացած «թուրք-սելջուկները» քաղաքակրթական առումով չկարողացան ժառանգորդ լինել Բյուզանդիայի հարուստ մշակույթին (այսօր բյուզանդական քաղաքակրթության հիմնական ժառանգորդներ համարվում են հույները, հայերը եւ սլավոնական ժողովուրդները): Այս ամենի համատեքստում կայուն եւ շարունակական կայսրության օրինակ կարող է հանդիսանալ Չինաստանը, որի ժողովուրդը, հաշվի անելով պատմական զարգացումների տրամաբանությունը, առայսօր ընդհանուր առմամբ տիրում է իր տարածքներին եւ հանդիսանում է սեփական քաղաքակրթության շարունակական կրողը:

## **Գլոբալացման առանձնահատկությունները բազմաբեւեռ աշխարհակարգում**

Ներկայումս ձեւավորված բազմաբեւեռ համակարգում իրավիճակը փոխվում է, քանի որ ԱՄՆ-ը կորցնում է գլոբալացումը «կարգավորող-վերահսկողի» մենաշնորհը: Դրան զուգահեռ հայտնվել են աշխարհաքաղաքական դերակատարներ, որոնց պատկերացումները համաշխարհային ինտեգրված դաշտի վերաբերյալ տարբերվում են ամերիկյանից: Այսինքն՝ ձեւավորվել են նյութական եւ ոչ նյութական ռեսուրսային կենտրոններ, որոնց գլոբալացնող էքսպանսիան տարբեր նպատակներ եւ հետեւաբար՝ ուղղվածություն ունի:

Հատկանշական է, որ որպես գլոբալացման գործընթացի դերակատարներ այսօր կարող են հանդես գալ ոչ միայն խոշոր տերությունները, այլեւ միջազգային հանրությունը, որի ներկայացուցիչները հաճախ համախմբվում են հասարակական կազմակերպությունների (ՀԿ) ձեւաչափերում: Վերջիններս, լայնորեն օգտվելով տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) հնարավորություններից, ի վիճակի են խոշոր նախագծեր իրագործել, ինչի շնորհիվ գլոբալ դերակատարի կարգավիճակ են ձեռք բերում: Հայտնի է, որ այդ ՀԿ-ների մի զգալի մասն ուղղորդվում է նույն աշխարհաքաղաքական խոշոր դերակատարների կողմից. սակայն տպավորությունն այնպիսին է, որ բազմաբեւեռ համակարգում դրանցից շատերն անխուսափելիորեն սկսելու են գործել ինքնուրույն:

Նկատենք նաեւ, որ բազմաբեւեռ աշխարհում ձգտելու են սեփական դերակատարումն ունենալ նաեւ երկրներ, որոնք նախկին «գերկազմակերպված» միաբեւեռ համակարգում չէին կարող ինքնուրույն հանդես գալ: Հասկանալի է, որ նման հնարավորություն նրանց ընծեռում է նույն զարգացած SS ոլորտը: Նման պետությունների ազդեցությունը գլոբալացման գործընթացների վրա ուղղակիորեն կախված է լինելու դրանց ունեցած քաղաքակրթական եւ մտավոր ռեսուրսներից:

## **Բազմավեկտոր գլոբալացումը եւ քառսը**

Վերոնշյալի համատեքստում պետք է հատկապես կարեւորել այն հանգամանքը, որ եթե, օրինակ, տնտեսական եւ տեխնոլոգիական ոլորտներում գլոբալացման դերակատարների ուղղվածությունը կարող է համընկնել, ապա քաղաքակրթական-գաղափարախոսական էքսպանսիայի վեկտորները հաճախ պետք է որ հակադիր լինեն: Դա նշանակում է, որ արդի գլոբալացումը կարող է ոչ թե «կարգավորել» համաշխարհային հանրությունը, այլ նպաստել «անկարգավորվածության» եւ քառտիկ

իրադրությունների առաջացմանը: Հայտնի է նաև, որ տեղեկատվական դարաշրջանում իրադարձությունների հաճախականությունը մեծանում է, եւ անընդհատ աճում է գործընթացների արագությունը: Այս հանգամանքները նույնպես պետք է ավելացնեն անկարգավորվածությունը, քանի որ հանրությունն ու կառավարման ավանդական մարմինները չեն հասցնում համարժեք արձագանքել իրադարձություններին: Այսինքն՝ արդի գլոբալացումը պարունակում է նաև «շարունակական քաոսի» առաջացման մեխանիզմներ: Այդ հանգամանքը, ըստ մեզ, դրված է ներկայիս համակարգային ճգնաժամի հենքում:

### **«Նեթոկրատիա»– ինտելեկտուալների համաշխարհային ընտրանի**

Համաձայն որոշ հետազոտողների (Ալեքսանդր Բարդ, Յան Ջոնդերկվիստ), ձեւավորվող «նոր աշխարհն» այնքան «բարդ է» եւ բազմակողմանեմտ, որ դրա կառավարումը կարող են իրագործել միայն բազմակողմանի գիտելիքների տեր ինտելեկտուալները, որոնք միավորված են լինելու ինտերնետային ցանցի միջոցով: Այդ ինտելեկտուալները ձեւավորելու են համաշխարհային նոր ընտրանի, այսպես կոչված, *նեթոկրատիա* (*net – ցանց բառից*), որը շնորհիվ իր մտավոր բարձր կարողությունների՝ պետք է կառավարի ապագայի արագ փոփոխվող (քաոսիկ) աշխարհը: Այս տեսանկյունից տեղին է հիշել նաև Սերգեյ Գրինյաեւի ավելի վաղ աշխատությունները, որոնցում խոսվում է ցանցային հանրությունում «գերինտելեկտի» ձեւավորման հնարավորության մասին:

Անշուշտ, բոլոր այն տեսություններին, որոնք վերաբերում են ապագայի աշխարհին, պետք է մոտենալ որոշակի թերահավատությամբ: Սակայն ակնհայտ է, որ տեղեկատվական հասարակության զարգացման հաջորդ փուլը սկզբունքային փոփոխություններ կմտցնի, առաջին հերթին, կառավարման համակարգում:

## **ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՉԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ *Ռուբեն Մելքոնյան***

Հայոց ցեղասպանության տարիներին մուսուլմանների առեւանգած հայ կանանց եւ աղջիկների խնդիրը հատկապես վերջին տարիներին հայտնվում է թուրքական գիտական եւ գրական շրջանակների ուշադրության կենտրոնում՝ իր հետ բերելով ինչպես նորություններ, այնպես էլ հարցականներ: Հատկապես Թուրքիայի արեւելյան շրջաններում, այն է՝ պատմական Հայաստանի մի շարք վայրերում, բավական հաճախ են հանդիպում մարդիկ, ովքեր պնդում են, թե ունեն հայ նախնիներ: Իսլամացված հայ կանանց խնդիրը դարձել է նաեւ թուրքական ժամանակակից գրականության նյութ, եւ անգամ կարելի է խոսել որոշակի գրական թեմատիկայի սկզբնավորման մասին: Բռնի իսլամացված հայ կանանց եւ աղջիկների ու նրանց առեւանգած մուսուլմանների խառնամուսնությունների հետեւանքով է նաեւ ձեւավորվել ներկայիս Թուրքիայում բնակվող բավական հոծ խառնածինների բանակը, որոնց շրջանում եւս նկատվում են արմատների որոնման, ինքնության ճգնաժամի երեւույթներ: Թուրքիայի համար նուրբ այս հարցը ներկայումս ծավալում է ստացել եւ բարձրաձայնվելուն զուգահեռ՝ բերում է նոր երեւույթներ, տասնամյակներով թաքցված ընտանեկան պատմությունների, հաճախ անձնական ողբերգությունների ի հայտ գալու պատճառ դառնում:

Էթնիկ ծագման թեման, միաժամանակ, չի շրջանցում թուրքական հասարակության թվում է թե ոչ մի շերտը: Թուրքիայի ամենաբարձրաստիճան հոգեւոր ղեկավարներից մի քանիսի անունները նույնպես շրջանառվում են հայկական ծագում ունենալու խնդրի համատեքստում՝ դառնալով համաթուրքական քննարկման առարկա:

Մի քանի տարի առաջ Թուրքիայում սկսեց ակտիվորեն քննարկվել այն հարցը, թե Պոլսո Հայոց 82-րդ պատրիարք Շնորհք Գալուստյանը եւ Թուրքիայի կրոնական հարցերի վարչության նախագահ (Թուրքիայի մուսուլմանների հոգեւոր առաջնորդ) Լյութֆի Դոզանը խորթ եղբայրներ են: Նշվում է, որ ապագա Շնորհք պատրիարքի մորը՝ Շուշան Գյուլթանեհին, 1915թ. ցեղասպանության ժամանակ առեւանգում է մի մուսուլման թուրք, որից ունեցած երեխաներից մեկն էլ իբր թե 1970-ականներին դառնում է Թուրքիայի մուսուլմանների կրոնապետ: Ինչպես նշում են

բազմաթիվ աղբյուրներ, նրանց եղբայրներ լինելու մասին տասնամյակներ շարունակ խոսվել է պոլսահայ համայնքում, սակայն հարցի շուրջ մեծ աղմուկ բարձրացավ, երբ 2005թ. սեպտեմբերին թուրքական «Յենի Աքթուել» հանդեսում հրատարակվեց Հայ Առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին Բեքչյանի հարցազրույցը, որտեղ նա ասել էր հետևյալը. «Շնորհք պատրիարքը ինձ պատմել է, որ մորը (1915-ին) փախցրել են, իսկ ինքն ընկել է որբանոց: Մայրն այնուհետև ամուսնացել է իրեն փախցրած մուսուլմանի հետ, որից երկու թե երեք երեխա է ունեցել, որոնցից մեկն էլ կրոնական հարցերի վարչության նախագահ Լյութֆի Դոդանն է»: Բեքչյանը հավելել է նաև, որ պատրիարքի մոր հուղարկավորության արարողությանը մասնակցել են նաև նրա մուսուլման երեխաները, այդ թվում եւ Լյութֆի Դոդանը: Այդ ժամանակ շատերն ասել են. «Ինչ սուրբ կին է եղել, երկու տղա ունի. մեկը քրիստոնյաների պատրիարքն է, մյուսը՝ մուսուլմանների»: «Յենի Աքթուել»-ի այս նյութն արտատպվեց մի շարք թուրքական թերթերում՝ քննարկման գլխավոր նյութ դառնալով: Արձագանքները երկար շարունակվեցին եւ, կարելի է ասել, լիովին չեն մարել անգամ ներկայումս:

Հարկ է նշել, որ Թուրքիայի կրոնական հարցերի վարչությունը ղեկավարել են երկու Լյութֆի Դոդաններ, ընդ որում՝ մեկը հաջորդել է մյուսին: Լուրը տպագրվելուց հետո անմիջապես ծառայեց այն հարցը, թե Թուրքիայի 10-րդ եւ 11-րդ կրոնապետեր Լյութֆի Դոդաններից որ մեկն է Շնորհք պատրիարքի ենթադրյալ խորթ եղբայրը: Ավելացնենք նաև, որ երկու նախկին կրոնապետերն էլ անմիջապես հերքեցին իրենց հայկական ծագում ունենալու մասին լուրերը, սակայն ուշագրավ է, որ նրանք երկուսն էլ դա վիրավորանք համարեցին: Նույնիսկ խոսվեց դատական գործի հարուցման մասին: Բացի այդ, միմյանց հակառակորդ լինելով՝ նրանք չզլացան նաև հայկական ծագման մասին պնդումներն օգտագործել իրենց նպատակների համար, եւ երկուսն էլ ակնարկեցին, թե հայկական ծագում ունի ոչ թե ինքը, այլ մյուս Լյութֆի Դոդանը: Եթե զուգահեռ անցկացնենք մեր օրերի Թուրքիայում կատարվող նմանատիպ իրադարձությունների միջև, ապա ակնհայտ կլինի նմանությունը:

Խնդրի վերաբերյալ մեկնաբանություններով հանդես եկան շատերը, սակայն իր ընտանիքի այս մութ ծալքի մասին ավելի վաղ խոսել էր հենց ինքը՝ երջանկահիշատակ պատրիարքը: Այսպես, 1965թ., Հայոց ցեղասպանության 50-ամյակին, թուրք լրագրողներն ուղղակիորեն հարցրել էին Շնորհք պատրիարքին, թե արդյոք եղել է ցեղասպանություն: Հանրապետական շրջանի բոլոր հայ պատրիարքների համար այս հարցը միշտ էլ եղել է ամենադժվար հարցերից մեկը, եւ նրանցից դիվանագիտական

հմտություն է պահանջվել՝ խուսափելու համար այդ հարցի պատասխանից: Շնորհք պատրիարքը խուսափողական պատասխան է տվել, թե ինքը պատմաբան չէ, թող պատմաբանները պատասխանեն: Սակայն երբ թուրք լրագրողները պնդել են իրենց հարցը, պատրիարքն ասել է. «1915-ին ես 7 տարեկան էի, մեր 70 հոգանոց գերդաստանից միայն ես ու մայրս ողջ մնացինք: Աքսորի ժամանակ մորս էլ կորցրի, քանի որ նա ստիպված ամուսնացավ մուսուլման մի թուրքի հետ: Հիմա դուք ինձ պատասխան տվեք, թե ուր են իմ ազգականները: Եթե դուք գտնեք այս հարցի պատասխանը, դրանով նաեւ պատասխանած կլինեք ցեղասպանությունը եղե՞լ է, թե՞ ոչ հարցին»:

Շնորհք պատրիարքի ընտանիքի հետ կապված խնդրին 2005թ. բավական մանրամասնորեն անդրադարձավ նաեւ Պոլսո ներկայիս պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը: Ըստ նրա՝ Լյուքֆի Դողաններից ոչ մեկը Շնորհք պատրիարքի խորթ եղբայրը չէ. «Շնորհք պատրիարքի հայրը՝ Միհրանը, ժամանակին Սեբաստիայից փոխադրվել է Յոզղաթի Իղդելի գյուղ: Գալուստյան ընտանիքը գյուղի հարգարժան, ազնվական ընտանիքներից էր, իսկ պատրիարքի մայրը Յոզղաթի Բեբեք գյուղից է, նրա անունը ոչ թե Գյուլդանե է, այլ Շուշան Գյուլթանե: Եթե չեմ սխալվում, 1908թ. գալով Իղդելի գյուղ՝ ամուսնանում է Միհրան Գալուստյանի հետ: Այս ամուսնությունից ծնվում են չորս երեխա՝ Անուշը, Շնորհիկը, Արմենը եւ Արշակը (հետագայում՝ Շնորհք պատրիարքը): Անուշը երկու տարեկան հասակում մահանում է հիվանդությունից: Իղդելիի կոտորածի ժամանակ Միհրան Գալուստյանը, նրա եղբայրները եւ ազգականները սպանվում են: Շնորհք պատրիարքն ասում էր, որ իրենց գյուղի մոտակա ձորի մոտ է գտնվում սպանվածների եղբայրական գերեզմանը: Ոմանք նույնիսկ այդ վայրը կոչում են Արյունոտ ձոր (թուրքերեն՝ քանլը դերե): Երեք երեխաների հետ այրի մնացած Շուշան Գյուլթանեին վերցնում է իրենց հարեւան Հաջը Ալի Դողանը՝ որպես երկրորդ կին: Շուշանը երեխաների հետ ապրում է ամուսնու՝ Միհրանի թալանված տան առաջին հարկում»: Մեսրոպ Մութաֆյանը հավանական չի համարում Լյուքֆի Դողանի եւ Շնորհք պատրիարքի եղբայրներ լինելու հանգամանքը, քանի որ Շուշան Գյուլթանեն երկրորդ ամուսնուց տղա երեխա չի ունեցել: Սակայն ուշագրավ է հետեւյալը. Մեսրոպ Մութաֆյանը նշել է, թե Շուշան Գալուստյանն անհանգստացել է, որ իր փրկված երեխաներին մուսուլման գյուղացիները վատ կվերաբերվեն եւ միգրացե վնաս տան, ուստի նրանց փրկության եղանակներ է փնտրել: Նախ ավագ որդուն՝ Արմենին ուղարկում է Թալասի որբանոց, իսկ դրանից մեկ ու կես տարի հետո հանգուցյալ ամուսնու Կեսարիայում գտնվող ազգականներին լուր տալով՝ այս անգամ փոքր

որդուն՝ Արշակին է ուղարկում Թալասի որբանոց: Ավագ որդին՝ Արմենը, 1923թ. որբանոցում հիվանդանում եւ մահանում է: Արշակին ամերիկյան բողոքական միսիոներները նախ տեղավորում են Բեյրութի մերձակա մի որբանոցում, հետո էլ՝ Պաղեստինի Նազարեթ քաղաքի մեկ այլ որբանոցում: 1927թ. Արշակ Գալուստյանն ընդունվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքության հոգեւոր դպրոց, իսկ 1935թ. ստանալով Շնորհք անունը՝ դառնում է հոգեւորական: 1955թ. էջմիածնում եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո վերադառնում է Ստամբուլ եւ 33 տարվա ընդմիջումից հետո այցելում իր հայրենի գյուղ, հանդիպում մորը:

Երբ ակտիվորեն ծավալվում էին այս քննարկումները, մեկնաբանությամբ հանդես եկավ նաեւ Շնորհք պատրիարքի զարմիկը՝ նրա խորք քրոջ որդի Հանիֆի Յըլմազը, ով ապրում է Յոզղաթի նահանգի Չանդըր գավառի Իդդելի, այսինքն՝ պատրիարքի հայրենի գյուղում: Նա նույնպես հայտարարեց, որ Լյուքֆի Դողանը Շնորհք Գալուստյանի խորք եղբայրը չէ, եւ այդ պատմությունը կարող է կապված լինել այն հանգամանքի հետ, որ Շուշանի երկրորդ ամուսնու ազգանունը նույնպես Դողան էր: Պատրիարքի մուսուլման զարմիկը նաեւ հայտարարել է, որ իր տատը՝ պատրիարքի մայրը, երկրորդ ամուսնությունից հետո իսլամ է ընդունել: Ինչպես ասել է Հանիֆի Յըլմազը, «Այս փաստը հայտնի էր նաեւ մեր քեռուն» (այսինքն՝ Շնորհք պատրիարքին՝ *Ռ. Մ.*): Հանիֆի Յըլմազը պատմում է, որ Ստամբուլ տեղափոխվելուց հետո Շուշանին է այցելել նրա երկրորդ ամուսնությունից ծնված աղջիկը՝ Հանըմքըզը, որին իբր թե Շուշան Գյուլթանեն հայտնել է, թե ինքը շարունակում է մնալ իսկական մուսուլման, եւ դրա մասին գիտի նաեւ Շնորհք պատրիարքը, սակայն որպեսզի իր տղային վնաս չլինի, նա բացահայտ ցույց չի տալիս իր իրական կրոնական պատկանելությունն ու գաղտնի կատարում է մուսուլմանական ծեսերը, այսինքն՝ յուրատեսակ ծպտյալ մուսուլման է:

Հարկ է նշել, որ Շուշան Գյուլթանեի կյանքի այս դրվագն արժանի է հատուկ ուշադրության. հայտնի է, որ ամուսնու մահից հետո նրան իսլամացրել են եւ տվել Գյուլքըզ անունը: Սակայն Պոլսո ներկայիս պատրիարք Մեսրոպ Մութաֆյանն իր հարցազրույցում նշել է, որ 1959թ., երբ Շնորհք եպիսկոպոսը Երուսաղեմի Հայոց պատրիարքի տեղապահն էր, նրա մայրը՝ Շուշան Գյուլթանեն, զնում է Երուսաղեմ եւ դառնում ուխտավոր, բնակվում Սուրբ Հակոբ հայկական վանքում: 1961թ. Շնորհք արքեպիսկոպոսն ընտրվում է Պոլսո Հայոց պատրիարք: Դրանից հետո նրա մայրը տեղափոխվում է պատրիարքարան եւ ապրում որդու հետ միասին: *«Երբ առողջությունը թույլ էր տալիս, ամեն կիրակի իր պատրիարք որդու հետ միասին այցելում էր եկեղեցիները եւ անձամբ մասնակցում պատա-*

*րազներին: Այնպես որ՝ ասեկոսեները նրա «ծպտյալ մուսուլման» լինելու մասին փոքր-ինչ տարօրինակ են»,*–կարծում է Մեսրոպ Մուրաֆյանը: Հայտնի է նաև, որ պատրիարքի մայրը մինչեւ մահն ապրել է որդու մոտ, թաղված է հայկական գերեզմանատանը, հայկական մամուլում անգամ պահպանված են լուրեր նրա հուղարկավորության մասին: Այսինքն՝ բավական իրատեսական է ենթադրել, որ նա պաշտոնապես վերընդունել է քրիստոնեություն, իսկ մուսուլման լինելու պարագայում թույլ չէր տրվի նրան թաղել քրիստոնեական ծեսով եւ հայոց գերեզմանատանը:

Ներկայացված փաստերը, իրոք, հերքում են Շնորհք պատրիարքի եւ Թուրքիայի կրոնապետի ազգակցությունը: Ինչպես ասել է Հրանտ Դինքը, *«Վերջ տրվեց տասնամյակներով հայկական համայնքում շրջանառվող այդ ասեկոսեներին, սակայն պարզ դարձավ, որ պատրիարքը նաև մուսուլման ազգականներ ունի»:* Այս սկանդալի հետեւանքով նաև իր պաշտոնից հեռացավ «Յենի Աքթուել» հանդեսի գլխավոր խմբագիրը: Իսկ օրերս մեզ է հասել նաև Գարեգին Բեքչյանի մեկնաբանությունը խնդրի առնչությամբ, որտեղ Սրբազանը կրկին պնդում է, որ այդ մասին իրեն պատմել է անձամբ Շնորհք պատրիարքը:

Սակայն վերոնշյալ պարզաբանումներից հետո էլ Թուրքիայի կրոնական առաջնորդներից մեկի հայկական ծագում ունենալու մասին լուրերը չէին դադարում, եւ Շնորհք պատրիարքի հետ կապված աղմուկի օրերին հեռուստատեսությամբ թուրք պրոֆեսոր Ջեքերիա Բեյազը հայտարարեց, որ իրականում Թուրքիայի 12-րդ կրոնապետ Սուլեյման Աթեշի մայրն է հայ: Ավելին, ըստ պրոֆեսորի՝ Սուլեյման Աթեշը իր հողվածներում քրիստոնեության մասին դրական է խոսում եւ այդպիսով ծառայում հայ լրբբիին: Որոշ ժամանակ հետո նրան միացավ նաև ազգայնամուլական հայացքներով աչքի ընկնող Սուլեյման Յեշիլուրթը՝ 2007թ. տպագրած «Անցյալից մինչեւ մեր օրերը հայ եւ հույն կրոնափոխները» գրքում մանրամասն անդրադառնալով Սուլեյման Աթեշի հայկական ծագմանը: Նշենք, որ գիտական հավակնություններ ունեցող նրա գիրքը լի է բամբասանքային «փաստերով» եւ «բացահայտումներով»: Իսկ ընդհանրապես գրքում հեղինակը կրոնափոխության համար մեղադրում է միայն գոհերին, բայց ոչ այդ ամենը կազմակերպած եւ դրան դրդած թուրքական պետությանը:

Վերոնշյալ Սուլեյման Յեշիլուրթը պնդում է, որ տարբեր աղբյուրների ուսումնասիրության արդյունքում պարզել է հետեւյալը. դոկտոր, պրոֆեսոր Սուլեյման Աթեշը ծնվել է 1933թ. հունվարի 31-ին Էյլազիզի (Խարբերդ) Թաղըմ գյուղում: Հայրը Իբրահիմ աղան է, մայրը՝ հայազգի Բեթին, որին 1915-ի «աքսորի» ժամանակ նրա հայ ծնողները թողել են տեղի թուրք

ընտանիքներից մեկին: Ավելի ուշ Բեթին ամուսնացրել են կրոնասերի համարում ունեցող Իբրահիմ աղայի հետ եւ անվանափոխել՝ տալով մուսուլմանական Բեհիյե անունը: Իսլամացված Բեհիյեն ունենում է երկու տղա՝ Սուլեյման եւ Յավուզ: Սուլեյմանին մանկուց իսլամական կրթություն են տալիս: Նա ընդունվում եւ ավարտում է Անկարայի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետը, այնուհետեւ պաշտպանում գիտական ատենախոսություն, ստանում դոկտորի գիտական աստիճան, ավելի ուշ՝ նաեւ պրոֆեսորի կոչում: 1976թ. իշխանության եկած նոր կոալիցիոն կառավարությունը գործից ազատում է Թուրքիայի կրոնական հարցերի վարչության 11-րդ պետ Լյուքֆի Դողանին, որը համարվում էր ձախ եւ նրա փոխարեն նշանակում Սուլեյման Աթեշին: Արդեն այդ ժամանակ սկսվում են նրա մոր հայ լինելու մասին խոսակցությունները, նույնիսկ տարածվում է այն կարծիքը, թե փոխեցին ձախ նախագահին եւ նրա փոխարեն բերեցին հայ նախագահ: 1978թ. իշխանության եկած նոր կառավարությունը գործից ազատում է Սուլեյման Աթեշին, որն էլ վերադառնում է համալսարանական գործունեությանը: Ժամանակի թուրքական մամուլում Աթեշի մոր հայկական ծագման մասին լուրերը մեծ աղմուկ են ստեղծել, իսկ այնուհետեւ՝ մարել: Սակայն Գարեգին Բեքչյանի հարցազրույցից հետո այդ հարցը նոր թափով սկսեց շրջանառվել: Յետաքրքիր է, որ Սուլեյման Աթեշը հերքում էր մոր հայկական ծագումը, սակայն Խարբերդում բնակվող նրա եղբայրը՝ Յավուզը, լրատվամիջոցներին հարցազրույց տալով հայտարարել է. «Այո, իմ մայրը ծագումով հայ էր, սակայն ամբողջ կյանքի ընթացքում որպես իսկական մուսուլման է ապրել»:

Այս ամենը Թուրքիայում լայն թափով ծավալվող «էթնիկ ծագման հիվանդության» դրսեւորումներն են: Անդրադառնալով այս խնդրին՝ թուրքական մի պարբերական հետեւյալ հետաքրքիր միտքն է արտահայտում. «Այսօր հայերի դեմ պայքարի կոչ անողները պետք է պատրաստ լինեն անակնկալների, որովհետեւ այն վայրերի մարդիկ, որտեղ տեղի է ունեցել կոտորածը, իրենց ծագման վրա ընդհանրապես վստահ չեն կարող լինել»: Թուրքիայում հայկական ծագումը որպես «մեղադրանք» գործածելու տարածված սովորությանն է օրերս անդրադարձել պոլսահայ Ալին Թաշչյանը՝ սարկազմով նշելով, որ Թուրքիայում բացահայտ հայ լինելու շահեկան կողմերից է այն, որ քեզ երբեք չեն «մեղադրի» հայկական ծագում ունենալու մեջ:

Այն, որ ցեղասպանության ժամանակ առեւանգված կանանց պարտադրվել է ընդունել իսլամ, հայտնի է, եւ բացառություն չի եղել նաեւ Շնորհք պատրիարքի մայր Շուշան Գյուլթանեն: Սակայն հարմար առիթի դեպքում թեկուզ մեծ տարիքում նա վերադարձել է իր արմատներին,

քրիստոնեությանը, իսկ նրա ճակատագիրը կիսած հազարավոր հայ կանայք նման հնարավորություն չեն ունեցել ու իրենց հայ լինելու գաղտնիքն ու հիշողությունը մեծ մասամբ գաղտնի են պահել մինչև կյանքի վերջ: Բացի այդ, նրանք ունեցել են բարդ հոգեբանական վիճակ եւ դաժան ընտրություն՝ մնալ արդեն պարտադրված մոր ընտանիքում եւ խնամել իրենց առեւանգիչներից ծնված երեխաների՞ն, թե՞ փախչել: Այս դաժան երկընտրանքը եւ մայրական բնազդը շատերին ստիպել է գնալ յուրատեսակ ինքնազոհության եւ ամբողջ կյանքում տառապել: Սակայն եղել են դեպքեր, երբ հնարավորության դեպքում նրանք լքել են իրենց պարտադրված ընտանիքները, իսկ երեխաները մեծացել են իրենց հայ մոր հանդեպ ատելությանմբ, որը նրանց լքել է: Փաստերը ցույց են տալիս նաեւ, որ Շնորհք պատրիարքի մայրն ամեն կերպ ցանկացել է փրկել իր երեխաներին, եւ դա հաջողվել է միայն մեկի պարագայում, իսկ գյուղում մնացած աղջիկը՝ Շնորհիկը, ի վերջո, ամուսնացել է քրդի հետ: Այստեղ պարզորոշ նկատում ենք, որ պարտադրված իսլամ ընդունելուց հետո էլ հայ կանանց մեջ չի մարում հայկականության զգացումը, եւ բավական խոսուն է, որ Պոլսո Չայոց պատրիարքության մեջ ամենանշանավոր ղեկավարներից մեկը՝ Շնորհք պատրիարքը, այդպիսի մի կնոջ որդին է: Այսինքն՝ եւս մեկ անգամ տեսնում ենք, որ իսլամացված հայերի դեպքում շատ կարելոր են հանգամանքները, եւ բոլորի հանդեպ ժխտողական դիրքորոշում ընդունելն առնվազն ճիշտ չէ:

## **ՀԱՅ ԿԱՅՈՒԼԻԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

### *Արեստակես Սիմավորյան*

Հավաքական իմաստով աշխարհի տարբեր երկրներում գաղթավայր կազմած առաքելադավան Հայության կողքին այսօր առանձին կրոնական համայնքների կարգավիճակով գոյություն ունեն հայ կաթոլիկների մեծ ու փոքրաթիվ խմբեր: Ցավոք, այսօր անտեսվում է կամ գրեթե չի խոսվում Հայության՝ բավական մեծ ներուժ ունեցող այս տարադավան համայնքի գործունեության մասին: Իսկ անտարբերությունը, ինքնաբերաբար, նրանց մեկուսացնում է Հայության ընդհանուր խնդիրներից՝ վերածելով ինքնամփոփ, իր իրավասություններով պարփակված հայ կրոնական համայնքի, որն, անշուշտ, սպառելով իրեն՝ կփոշիանա:

Շատ դեպքերում հայ կաթոլիկների մասին պատկերացումները սահմանափակվում են Մխիթարյան միաբանության, Սիրիայի, Լիբանանի համայնքների կամ առնվազն Հայաստանի, Վրաստանի «ֆրանգների» գոյությամբ, այն պարագայում, երբ նրանք զբաղեցնում են բավական լայն աշխարհագրական արեալ:

Հայ կաթոլիկներն այսօր իրենց ազգային նկարագիրը պահպանելու խնդիր ունեն: Ազգապահպան այդ գործը հնարավորինս կատարվում է Մխիթարյան միաբանության հայրերի կողմից, ովքեր փորձում են պահպանել տարբեր երկրներում իրենց տրամադրության տակ գտնվող դպրոցների, վարժարանների դեռևս չխամրող գործունեությունը:

Տարբեր տվյալներով ներկայումս աշխարհում հայ Կաթողիկե եկեղեցու հետևորդները հինգ հարյուրից վեց հարյուր հազարի են հասնում: Նրանց հոգեւոր պահանջները բավարարելու համար պատմական տարբեր ժամանակահատվածներում ստեղծվել են թեմեր, որոնց մի մասն ունի ընդամենը մի քանի տարվա պատմություն, ինչպիսին է, օրինակ, Ավստրալիայի հայ կաթոլիկ համայնքը:

Անդրադառնանք հայ կաթոլիկ համայնքներից մի քանիսին:

*Արեւելահայկազական թեմ (օրդինարիատ).* այս թեմը բավական մեծ աշխարհագրական տարածք է զբաղեցնում՝ ընդգրկելով Հայաստանի, Վրաստանի եւ ԱՊՀ բոլոր հայ կաթոլիկներին: Թեմը ստեղծվել է Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո, առաջնորդարանը Գյումրիում է: 1992-ին Հայ Կաթողիկե համայնքը Հայաստանում պաշտոնական ճանաչում ստացավ, ինչն ամրագրվեց Մարդու իրավունքների

հռչակագրի հիման վրա, այնուհետև՝ 1993-ին, թեմի պաշտոնական բացումը կատարվեց Գյումրիում: Հայաստանում կաթոլիկների թիվը 180 հազար է, որոնք հիմնականում բնակվում են հյուսիսային շրջաններում, մասնավորապես՝ Շիրակի, Տաշիրի եւ Լոռու մարզերում, մասամբ Երեւան, Գյումրի, Արթիկ քաղաքներում:

Մոտ 50 հազար հայ կաթոլիկներ են բնակվում Վրաստանի Սամցխե-Ջավախքի՝ Նինոծմինդայի, Ախալքալաքի, Ախալցխայի հայաբնակ գյուղերում: Ջավախքի սոցիալ-տնտեսական ծանր կացության պատճառով, ինչպես այդ տարածքի ողջ Հայության, այնպես էլ կաթոլիկների շրջանում բարձր է արտագաղթողների տոկոսը:

Փոքրաթիվ կաթոլիկ հայեր բնակվում են Բաթումում, Փոթիում, որոնք չունեն կազմակերպված համայնք: Թիֆլիսի եւ Վրաստանի տարբեր վայրերում ձեւավորված երբեմնի ավանդական հայ կաթոլիկ համայնքներն այլեւս գոյություն չունեն, ինչը վրաց իշխանությունների՝ էթնիկ հայ կաթոլիկներին ուժացնելու հետեւողական քաղաքականության արդյունք է:

Ռուսաստանի Դաշնությունում ամենակազմակերպվածը, թերեւս, Մոսկվայի հայ կաթոլիկ համայնքն է, որը գործում է 2000 թվականից: Սկզբնապես հայ կաթոլիկները հավաքվում էին Մոսկվայի Սբ. Լյուդովիկոս եկեղեցում՝ միանձնուհի Նունե Պողոսյանի ղեկավարությամբ, սակայն վերջինիս հեռանալուց հետո որոշ ժամանակ հավաքները դադարել էին, եւ միայն 2002 թվականից այն սկսեց գործել իտալացի վանահայր Միքայել Բասալեի հովվապետությամբ: Համայնքի ներկայացուցիչները Հայաստանից, Վրաստանից արտագաղթած, Ռուսաստանի տարբեր քաղաքներից մայրաքաղաք տեղափոխված հայ կաթոլիկներ են, ովքեր այս կերպ փորձում են կազմակերպվել: Առանց եկեղեցական արարողակարգի հայ կաթոլիկների ոչ մեծ խմբեր են բնակվում Կրասնոդարի երկրամասում, Պսկովում, Ռոստովում, Աբինսկում, Սոչիում, Ադլերում եւ այլ քաղաքներում:

*Լատինական Ամերիկայի Առաքելական եպիսկոպոսություն.* 20 տարվա պատմություն ունեցող այս թեմը հիմնադրվել է 1989թ. Հովհաննես Պողոս Բ պապի կողմից: Կենտրոնը Սան Պաուլոյում է: Բացառությամբ Արգենտինայի, որն առանձին եպիսկոպոսության աստիճան ունի, այս թեմի մեջ են մտնում լատինաամերիկյան բոլոր, ներառյալ Մեքսիկայի հայ կաթոլիկները, որոնց ընդհանուր թվաքանակը 12 հազար է: Հայ կաթոլիկների ավելի կազմակերպված համայնքներ կան Ուրուգվայում (Մոնտեվիդեո), Բրազիլիայում (Սան Պաուլո):

Բրազիլաբնակ հայ կաթոլիկ համայնքն, ազգային ինքնության պահ-

պանման առումով, բավական գործուն դերակատարում ունի: Հիմնվել են մշակութային՝ թատերական, երիտասարդական-պատանեկան, մարզական խմբակներ, երգչախմբեր: Համայնքային կյանքից մեկուսի ապրող սակավաթիվ հայ կաթոլիկները ցրված են Հարավային Ամերիկայի երկրներում (մասնավորապես Վենեսուելայում, Պարագվայում, Մեքսիկայում), եւ նրանց մոտավոր թիվը որոշելը դժվար է:

Լատինական Ամերիկայի հայ կաթոլիկ թեմ կա Բուենոս Այրեսում: Դա Սբ. Գրիգոր Նարեկացու եպիսկոպոսությունն է՝ հիմնադրված 1989թ.: Վատիկանի տվյալներով՝ Արգենտինայում հաշվվում է 16 հազար հայ կաթոլիկ: Ջարմանալի է, որ այդ թվաքանակը քսան տարիների ընթացքում անփոփոխ է մնացել: Դա բացատրվում է նրանով, որ հայ կաթոլիկների մի քանի սերունդ կամ ծուլման ճանապարհով հեռացել են իրենց համայնքից, կամ էլ վերադարձել են Առաքելական եկեղեցու գիրկը: Դրան նպաստել է նաեւ Արգենտինայի տնտեսական ճգնաժամը (արտագաղթ ԱՄՆ): Համայնքն ունի մեկ դպրոց՝ Մխիթարյան վարժարանը, որն այդ երկրում կեսդարյա պատմություն ունի: Թեմի ջանքերով է հրատարակվում նաեւ «Վարդանանք» ժողովրդապետական տեղեկագիրը, որն անդրադառնում է հայ կաթոլիկ համայնքի խնդիրներին, մշակութային կյանքին: Գործում են մշակութային՝ արվեստի, պարի խմբակներ, ստեղծագործական միավորումներ: Որքան էլ վերոհիշյալ գործոնները նպաստավոր լինեն համայնքի պահպանմանը, այնուհանդերձ, իրատեսական է թվում, որ Արգենտինայի հայ կաթոլիկ համայնքը բավարար նախադրյալներ ունի ծուլվելու դավանակից արգենտինացիներին:

*Իրաք. Բաղդադի արքեպիսկոպոսություն.* Իրաքի ոչ մեծ հայ կաթոլիկ համայնքը ձեւավորվել է 17-18-րդ դդ.: Հայերին դավանափոխելու մեծ աշխատանք ծավալեցին կաթոլիկ միսիոներները:

Հիմնականում արաբախոս իրաքաբնակ հայ կաթոլիկ համայնքի կենտրոնը մշտապես գտնվել է Բաղդադում, որտեղ շուրջ 18 տարի գործում է համայնքապատկան եկեղեցին: Այստեղ խնդիրները փոքր-ինչ այլ են՝ պայմանավորված իրաքյան պատերազմով: Մինչեւ պատերազմը հայ կաթոլիկների թիվը գերազանցում էր երկու հազարը: Պատերազմական օրերին Բաղդադի հայ կաթոլիկ եկեղեցին բոլոր իրաքաբնակ հայերի (անկախ դավանանքից) հավաքատեղին էր:

Սակայն քրիստոնեական փոքրամասնությունների դեմ իսլամական ծայրահեղականների հարձակումները խաթարեցին հայ կրոնական երկու համայնքների բնականոն կյանքը: Մի քանի հայ կաթոլիկների սպանությունը պատճառ դարձավ, որ հարյուրի հասնող արաբախոս հայ կաթոլիկներ գաղթեն Սիրիա եւ Լիբանան: Իրաքի հայ կաթոլիկ համայնքը կարելի

է դասել փոքր համայնքների կարգին, որը ծանր օրեր է ապրում, ինչպես եւ ողջ Իրաքի հայությունը:

*Թուրքիա, Ստամբուլի արքեպիսկոպոսություն.* Երբ 1830թ. սուլթան Մահմուդ 2-րդի հատուկ հրովարտակով Օսմանյան կայսրության տարածքում ապրող հայ կաթոլիկները ճանաչվեցին առանձին համայնք (միլլեթ), Պոլսում ստեղծվեց թեմ, որը գործեց ավագ թեմի կարգավիճակով:

Թուրքիայի Հանրապետությունում հայ կաթոլիկների համայնքային կյանքը ի սկզբանե կենտրոնացված է եղել Ստամբուլում: Շուրջ 60 ընտանիքի հասնող մի հատված էլ ապրում է Անկարայում: Վերջիններս բավական թույլ կապեր ունեն տեղի ոչ կաթոլիկ հայերի հետ: Սա լուրջ խնդիր է եւ պատմական հիմք ունի, որը հետզհետե խորանալով՝ մեծ ճեղք է թողել երկու հայ կրոնական համայնքների միջեւ: Անկարայի հայ կաթոլիկ համայնքը շարունակում է վարել բավական մեկուսի, ինքնամփոփ կենսակերպ: 1970-ական թթ. տեղի հայ կաթոլիկ համայնքի անդամների թիվը 14 հազար էր, սակայն այսօր այն հասնում է 3 հազարի: Մի շարք ոչ հավաստի տվյալներով՝ նրանց թիվը 25 հազար է, ինչը խիստ անհավանական է թվում, քանի որ 3 հազար թիվը կամ մի փոքր ավելին Վատիկանի պաշտոնական վիճակագրական տվյալներն են: Թվերի ուռճացման հարցում Վատիկանը ամենաակտիվներից է՝ փորձելով հետետրոդների մեծաթվությամբ ապահովել իր եկեղեցու զերակայությունն այլ եկեղեցիների նկատմամբ: Այնպես որ, վերջինիս տվյալներն ավելի արժանահավատ աղբյուր են հանդիսանում, ինչը երբեմն շոջանառվում է թուրքական գիտավերլուծական հոդվածներում:

Մեր դիտարկումներից ելնելով՝ փաստենք, որ թուրքական տեղեկատվական դաշտում այս համայնքի ներկա գործունեության մասին շատ կցկտուր եւ հակասական տեղեկություններ են պարունակվում: Մասնավորապես, Թուրքիայի տարածքում բնակվող հայերի մասին քննարկումները սահմանափակվում են կամ բուն հայկական համայնքի, կամ իսլամացած, ծպտյալ հայերի խնդիրներով, իսկ կաթոլիկների պարագայում՝ նրանց թվաքանակի նշմամբ:

Ստամբուլում, որն այսօր տեղի հայ կաթոլիկների հոգեւոր կենտրոնն է, գործում է 12 հայ կաթոլիկական եկեղեցի, մեկ եկեղեցի կա Մարդին քաղաքում, որտեղ հայ կաթոլիկներ այլեւս չկան: Գործում են Մխիթարյան միաբանության ենթակայության տակ գտնվող նախակրթարաններ, երկսեռ վարժարաններ: Բարեգործական հաստատություններից հիշատակման են արժանի Սուրբ Հակոբ բարեգործական մարմինը, Սուրբ Հակոբ հիվանդանոցը, Սուրբ Հակոբ բուժհիմնարկությունը, որոնք բոլորն էլ

համայնքապատկան կառույցներ են: Անկարայի հայ կաթոլիկները, սակայն, հաղորդակից չեն համայնքի կյանքին, անգամ եկեղեցի հաճախելու հնարավորություն չունեն:

Տարբեր երկրներում հիմնված հայ կաթոլիկ համայնքների ներկայիս վիճակն ուսումնասիրության կարիք ունի: Պետք է փորձել որոնել այս համայնքները պահպանելու միջոցներ եւ ուղղություններ: Ստտեցումները պետք է հստակեցվեն ըստ էության, հաշվի առնելով, որ դրանցից յուրաքանչյուրն ապրում է տարբեր մշակույթներով ձեւավորված արժեհամակարգերով: Անհրաժեշտ է նաեւ զանազանել այն, որ հայ կաթոլիկների խնդիրները հիմնովին տարբերվում են այլ կրոնական շերտերի խնդիրներից. օրինակ, իսլամացված հայերի պարագան հայ իրականության մեջ առանձնահատուկ է:

Վատիկանի տարեկան պաշտոնական վիճակագրության հիման վրա՝ ստորեւ ներկայացնում ենք հայ կաթոլիկ թեմերը, որտեղ, ըստ տարիների, բերված է թեմի անդամների թվաքանակը: Աղյուսակում ներկայացված չէ Ավստրալիայի հայ կաթոլիկ համայնքը՝ մոտ հազար մարդ, տեղ չեն գտել նաեւ Ավստրիայի, Իտալիայի, Հունգարիայի փոքրաթիվ հայ կաթոլիկ համայնքների վերաբերյալ տվյալները:

### Հայ կաթոլիկներն աշխարհում

Թեմեր	1990թ.	2000թ.	2005թ.	2007թ.	2008թ.
Պատրիարքարան, Բեյրութ, Լիբանան	15 000	12 000	10 000	12 000	12 000
Սպահանի եպիսկոպոսություն, Իրան	2200	2200	10 000	10 000	10 000
Բաղդադի եպիսկոպոսություն, Իրաք	2200	2000	2000	2000	2000
Ալեքսանդրիայի եպիսկոպոսություն, Եգիպտոս	1500	1287	1276	6000	6000
Հալեպի արքեպիսկոպոսություն, Սիրիա	15 000	17 000	17 000	17 000	17 500
Կամիշլիի եպիսկոպոսություն, Սիրիա	4303	4000	4000	4000	4000
Ղամասկոս, պատրիարքական էքզարքություն, Սիրիա	4000	4000	4500	4500	4500
Ստամբուլի արքեպիսկոպոսություն, Թուրքիա	3700	3680	3670	3640	3650

Աման, Երուսաղեմի պատրիարքական փոխանորդություն	—	280	740	800	800
Լվովի եպիսկոպոսություն, Ուկրաինա	—	—	—	0	0
Փարիզի Սուրբ Խաչ եպիսկոպոսություն, Ֆրանսիա	30 000	30 000	30 000	30 000	30 000
Աթենքի օրդինարիատ, Հունաստան	650	600	400	400	350
Լատինական Ամերիկայի եւ Մեքսիկայի Առաքելական եպիսկոպոսություն	30 000	12 000	12 000	12 000	12 000
Բուենոս Այրեսի Աբ. Գրիգոր Նարեկացու եպիսկոպոսություն, Արգենտինա	—	16 000	16 000	16 000	16 000
Գեռլայի օրդինարիատ, Ռումինիա	—	1000	515	842	806
Նյու Յորքի եպիսկոպոսություն, ԱՄՆ եւ Կանադա	34 000	36 000	36 000	36 000	36 000
Արելեյաեվրոպական թեմ, Գյունըրի	—	220 000	220 000	220 000	390 000
Ընդհանուր	142 853	362 047	368 101	375 182	539 806

## ՄՈՋԱԻԴՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

### Արաքս Փաշայան

Մոջահիդների<sup>1</sup> ինստիտուտը, իր ներկա ձեւաչափով, կազմավորվեց 1980–1990-ականներին՝ աֆղանական պատերազմի արդյունքում եւ կապված էր «սառը» պատերազմի իրողությունների հետ: Աֆղանական պատերազմի ողջ ընթացքում (1979–1988) ԱՄՆ-ը, մասնավորապես՝ սաուդական եւ պակիստանյան հատուկ ծառայությունների միջոցով, ֆինանսական եւ ռազմական լայնածավալ աջակցություն ցույց տվեց խորհրդային բանակի դեմ կռվող ռազմական խմբավորումներին: Արդյունքում, արդեն պատերազմի ավարտից եւ երկրից խորհրդային ուժերի դուրսբերումից հետո ձեւավորվեց ռազմական գործողությունների մեծ փորձ ունեցող աֆղանցիների ու նաեւ՝ արաբ աֆղանցիների<sup>2</sup> այն ռեսուրսը, որը հետագայում հատուկ նշանակություն տալով հանուն իսլամի մղվող պատերազմին եւ «իսլամական համերաշխության» գաղափարին՝ մասնակցեց Ալժիրում, Կենտրոնական Ասիայում, Բալկաններում եւ Կովկասում ծավալվող ռազմական գործողություններին: Նույն այդ ռեսուրսը լավագույնս օգտագործվեց միջազգային մի շարք ահաբեկչությունների նախապատրաստման ու իրականացման ժամանակ:

Հատկանշական է, որ 1991–1994թթ., իսկ ավելի ակտիվ ձեւով՝ 1993–1994թթ. ընթացքում (մինչեւ 1994թ. մայիսին կողմերի միջեւ կնքված զինադադարը) մոջահիդներն ադրբեջանական կողմից մասնակցեցին նաեւ Ղարաբաղյան պատերազմին:

Ադրբեջանը Ղարաբաղյան հակամարտության սկզբնավորումից ի վեր խնդրի կարգավորման հարցում մեծ ակնկալիքներ ուներ իսլամական շրջանակներից, որի հետ համագործակցությունը թվում էր խոստումնալից: Անկախության ձեռքբերումից հետո Ադրբեջանն ընդգծում էր իր պատկանելությունն իսլամական աշխարհին՝ ձգտելով հայ-ադրբեջանական հակամարտությանը կրոնական շեշտադրումներ տալ:

1993-ին, երբ ռազմական ուժերի հաշվեկշիռն արմատապես փոխվեց հօգուտ հայերի, Ադրբեջանն (արդեն Հեյդար Ալիևի իշխանության գալուց հետո) ավելի կոնկրետ քայլեր ձեռնարկեց պատերազմական գործողությունների մեջ ներգրավելու իսլամական պետություններից հավաքագրված վարձկանների, մասնավորապես՝ մոջահիդների: 1993թ. օգոստոսին

Ադրբեջանի ներքին գործերի փոխնախարար Ռովշան Ջավադովը հանդիպեց Աֆղանստանի վարչապետ եւ «Յեզբե Էսլամի» («Իսլամական կուսակցության») առաջնորդ Գուլբեդդին Յեքմաթյարին՝ պայմանավորվածություն ձեռք բերելով մոջահիդներին Ադրբեջան ուղարկելու մասին: Իսկ մի քանի ամիս անց, դեկտեմբերին, Բաքու այցելեց աֆղանական մի պատվիրակություն, որի կազմում էր աֆղանցի հայտնի դաշտային հրամանատար Ռաշիդ Դուսթունը՝ քննարկելու պետական մակարդակով հաստատված համագործակցությանն առնչվող հարցեր: Արդյունքում՝ Բաքվի եւ Քաբուլի միջեւ հաստատվեց օդային կապ: Ադրբեջան ուղարկված մոջահիդների մեջ գերակշռում էին աֆղանցիները (չնայած կային նաեւ արաբ աֆղանցիներ): Նրանք հիմնականում «Յեզբե Էսլամի» խմբավորման մարտիկներն էին: Առանձին փորձագետների համոզմամբ՝ մոջահիդների տեղափոխումը Բաքու չէր իրականանա առանց պակիստանյան եւ ամերիկյան հատուկ ծառայությունների աջակցության:

Մինչ օրս հստակեցված չէ ռազմական գործողություններին մասնակցած մոջահիդների թվաքանակը, որը, տարբեր տվյալներով, տատանվում է 1000-3000-ի շրջանակներում: 1994թ. Washington Post-ի հրապարակումներից մեկում նշված է, որ ադրբեջանական բանակում ներգրավված են վարձկաններ Աֆղանստանից, Իրանից, Սիացյալ Նահանգներից, Ռուսաստանից եւ Թուրքիայից, իսկ մասնավորապես Թուրքիան եւ Իրանը Բաքվին տրամադրել են ռազմական հրահանգիչներ: Նույն աղբյուրը, հղում անելով արեւմտյան դիվանագետների, նշում է, որ 1993թ. Ադրբեջանը հավաքագրել է 1000 աֆղան մոջահիդի:

Առանձին տեղեկությունների համաձայն՝ մոջահիդները տեղակայվել են Ղարաբաղյան ռազմաճակատի մեծ մասամբ հարավարեւմտյան շրջաններում՝ Ֆիզուլիի եւ Ջանգելանի ուղղություններում: Նրանք գրեթե չեն շփվել ադրբեջանցի զինվորականների հետ, ինչը պայմանավորված է եղել մի քանի պատճառներով: Ադրբեջանցի զինվորները չեն հետեւել շարիաթական նորմերին, օգտագործել են ալկոհոլային խմիչքներ, ինչը վերաճել է կողմերի միջեւ բախումների: Բացի այդ, մոջահիդները հակակրանք են ունեցել նաեւ ադրբեջանական բանակում կռվող սլավոնական ծագմամբ վարձկանների նկատմամբ: Ադրբեջանական իշխանությունները փորձել են քողարկել ռազմական գործողություններին մոջահիդների մասնակցությունը: Խնդրին հնչեղություն չտալու համար թաքցվել է աֆղանցիների շրջանում իրական զոհերի թիվը, եւ ոչ բոլոր մահացածների աճյուններն են Աֆղանստան ուղարկվել<sup>3</sup>:

Հատկանշական է, որ Ղարաբաղյան պատերազմի ողջ ընթացքում

Հայաստանի իշխանությունները փորձել են հակազդել իսլամական շրջանակներից Ադրբեջանին ցույց տրվող ռազմաքաղաքական օգնությանը: Ասվածի ապացույցն է 1994թ. մայիսին Հայաստանի նախագահի նամակը Աֆղանստանի ղեկավարությանը, որտեղ անհանգստություն է արտահայտված Ղարաբաղյան պատերազմում մոջահիդների ներգրավվածության կապակցությամբ: Պատասխան նամակում Աֆղանստանի նախագահը դատապարտել է Լեռնային Ղարաբաղի պատերազմում Աֆղանստանի քաղաքացիների մասնակցությունը՝ հույս հայտնելով, որ հակամարտությունը կլուծվի խաղաղ ճանապարհով, ինչը կարելի է դիտարկել սոսկ որպես դեկլարատիվ քայլ:

Այս առումով, ուշագրավ է նաև 1994թ. դեկտեմբերի 21-ին ՄԱԿ-ի՝ Վարձկանների գծով մարդու իրավունքների հանձնաժողովի հատուկ զեկուցողին ուղղված Հայաստանի արտգործնախարարության նամակը, որում արտահայտված է Հայաստանի իշխանությունների դժգոհությունը Լեռնային Ղարաբաղի պատերազմում լայնորեն ներգրավված եւ Ադրբեջանի կողմից հավաքագրված վարձկանների փաստի կապակցությամբ<sup>4</sup>: Նամակում վարձկանների (ԱՊՀ-ից եւ այլ երկրներից՝ Իրանից, Թուրքիայից եւ Աֆղանստանից) մասին տվյալներն ամրագրված են համապատասխան աղբյուրներով: Մոջահիդների վերաբերյալ ներկայացված են մի շարք մանրամասներ, նշված են նրանց ծառայությունների ոլորտները (860 եւ 723 մոտորային բրիգադներ, օդային, ցամաքային, հրետանային ուժեր, հատուկ ծառայություններ) եւ տեղակայման շրջանները (Ժղանովի, Շամխորի շրջաններ, Սինգեչաուրին հարող շրջան, Ալ-Բայրամլի քաղաք), կցված են 12 վարձկանների անուններ: Նրանցից մեկն Աֆղանստանի քաղաքացի Բախտիյար Վերբոլլահի Բաբերգահին է (Սոզարի Շարիֆ բնակավայրից), ով գերի է ընկել 1994թ. ապրիլին Ղարաբաղյան ուժերի կողմից, որի միջոցով էլ բացահայտվել են մոջահիդներին վերաբերող մի շարք իրողություններ:

Չնայած Ադրբեջանի իշխանությունները հերքում են ռազմական գործողություններին մոջահիդների մասնակցությունը, այն այլևս ապացուցված պատմական իրողություն է, ինչի համար հիմք են դարձել ռազմաճակատում գոհված մոջահիդների (իրենց ավանդական հագուստով) մարմինները, ինչպես նաև Աֆղանստանի պաշտոնական լեզուներով (դարի եւ փուշտու) փաստաթղթերը, Աֆղանստանում եւ Պակիստանում հրատարակված կրոնական գրականությունը եւ այլ իրեղեն ապացույցներ, որ հայտնաբերվել են Ղարաբաղյան պաշտպանական ուժերի կողմից:

Ղարաբաղյան պատերազմին մոջահիդների մասնակցության վերա-

բերյալ վերջերս հետաքրքրական ուսումնասիրություն է իրականացրել իսպանական Real Instituto Elcano հետազոտական կենտրոնի աշխատակից Միքայել Թարընբին<sup>5</sup>: Նա «Մոջահիդները Լեռնային Ղարաբաղում» իր հետազոտության մեջ շեշտադրում է մի քանի հարցեր՝ Ղարաբաղյան պատերազմին մոջահիդների մասնակցության հարցը եւ նրանց դերակատարությունը հետագա ջիհադական շարժումներում: Լեռնային Ղարաբաղում հայտնված մոջահիդներին նա բաժանում է երեք հիմնական խմբի: Առաջին խմբում Ադրբեջանից կովկասյան այլ շրջանների անցած եւ այլ հակամարտություններում ներգրավվածներն են, երկրորդում՝ Ադրբեջանում հաստատվածները (ովքեր դարձան Ադրբեջանում մարտնչող իսլամի հենարանը), իսկ երրորդ խմբում մահացած աֆղանցիներն են:

Հետազոտողի կարծիքով՝ պատերազմը վերապրած մոջահիդների մեծ մասը վերադարձավ հայրենիք, մյուս մասն առավելապես ներգրավվեց հակառուսական պայքարում՝ չեչենական պատերազմում, որտեղ ներդրվեց նաեւ Ղարաբաղյան պատերազմի փորձը: Նրանցից էր Սաուդյան Արաբիայի քաղաքացի, չեչենական ծագումով հայտնի դաշտային հրամանատար Խատաբը, ով աֆղանստանյան ջիհադից հետո սկզբում մասնակցել է Տաջիկստանում հակակառավարական իսլամիստական շարժումներին, այնուհետեւ՝ Ղարաբաղյան պատերազմին: Օգտագործելով Ղարաբաղյան պատերազմի ժամանակ ձեռք բերված կապերը՝ Խատաբն Ադրբեջանից անցել է Հյուսիսային Կովկաս (Չեչնիա եւ Դաղստան) եւ մինչեւ սպանվելը (2002թ.) եղել ջիհադական շարժման ամենահանգուցային դեմքերից մեկը: 2005թ. իր հարցազրույցում ադրբեջանական բանակի հրամանատար Ազեր Ռուսթամովը նշել է, որ Ղարաբաղյան պատերազմում կռվել են հարյուրավոր չեչեն կամավորներ, որոնց ղեկավարել են չեչեն դաշտային հրամանատարներ Շամիլ Բասաեն ու Սալման Ռադուելը: Սակայն ունենալով մեծ կորուստներ՝ նրանք ստիպված են եղել հեռանալ:

Մ.Թարընբին բավական հետաքրքիր մի դիտարկում է անում: Նա նշում է, որ Ղարաբաղյան պատերազմը որոշակիորեն դուրս մնաց միջազգային ջիհադական շարժման տեսադաշտից: Մարտնչող իսլամի հռետորականության մեջ այս խնդրին անդրադարձներ գրեթե չեղան: Չնայած այն հանգամանքին, որ պատերազմում բազմաթիվ մոջահիդներ սպանվեցին, ջիհադական շարժման գործիչներից ոչ մեկը (այդ թվում՝ Բեն Լադենը) այս թեմային ոչ մի անգամ չի անդրադարձել: Հետազոտողի կարծիքով՝ դա առավելապես կապված է այն հանգամանքի հետ, որ Ղարաբաղյան պատերազմում ադրբեջանական կողմը պարտություն կրեց: Բացի այդ, ինչպես նշում է Թարընբին, մոջահիդները մասնակցել են պատե-

րագմին՝ առաջին հերթին որպես վարձկաններ (այլ ոչ թե՛ կամավորներ):

Ղարաբաղյան պատերազմում մոջահիդների ներգրավումը որոշակիորեն նպաստեց, որպեսզի Ադրբեջանում իսլամական ծայրահեղական առանձին կառույցներ (այդ թվում՝ վահաբական) հիմնավորվեն: Դեռևս 1990-ականներից Ադրբեջանում գործում էին միջազգային իսլամական արմատական մի շարք կազմակերպությունների մասնաճյուղեր («Հիզբ Աբ-թահիրի», «Թաբլիդի Ջամաաթ», «Ալ-ջիհադ Ալ-իսլամի», «Ձեյշ Ուլ-իսլամ», «Ալ-Ջիհադ» եւ այլն): Ադրբեջանի տարածքը շատ դեպքերում օգտագործվել է Չեչնիա եւ Դաղստան զենք, ֆինանսական, նյութական եւ այլ միջոցներ ու զինյալներ տեղափոխելու համար:

2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո ամերիկյան լրատվամիջոցների, մասնավորապես Նյու Յորքի Associated Press-ի հաղորդման համաձայն՝ դեռևս 2001թ. սեպտեմբերի 10-ին Կոնգրեսի հետազոտական ծառայությունը (Congressing Research Service) իր հրապարակած զեկույցում արձանագրել է, որ առանձին խմբավորումներ եւ անհատներ, ովքեր կապ ունեն Ուսամա Բեն Լադենի եւ «Ալ-Կաիդայի» հետ, օգտագործել են Ադրբեջանի տարածքը՝ որպես ահաբեկչության ցանցի հենակետ: Նշվել է, որ 1998թ. Նայրոբիի (Քենիա) եւ Դար էս Սալամի (Տանզանիա) ամերիկյան դեսպանատների պայթյուններից հետո Յետախուզության դաշնային բյուրոն արձանագրել է Բաքվի «Իսլամական ջիհադի» («Ալ-Ջիհադ Ալ-իսլամի») մասնաճյուղի իր համախոհների հետ Բեն Լադենի հեռախոսային 60 զանգ: (Պատահական չէ, որ սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո ԱՄՆ-ում շատերը խոսում էին ահաբեկչության մեջ ադրբեջանական հնարավոր հետքի մասին): Այդ շրջանում եւ ապա 2001-ից հետո Ադրբեջանի վրա կար Վաշինգտոնի ճնշումը՝ պայքարելու երկրում իսլամական արմատական խմբավորումների դեմ, ինչին եւ ձեռնամուխ եղան ադրբեջանական իշխանությունները: Սակայն այսօր էլ Ադրբեջանի ներքաղաքական զարգացումներում կա իսլամի արմատականացման հնարավոր վտանգ, ինչն իրենց մշտական տեսադաշտում են պահում երկրի հատուկ ծառայությունները:

Փաստորեն, հետխորհրդային տարածքում մոջահիդներն իրենց առաջին փորձարկումն անցան Ղարաբաղյան ճակատում: Հայկական պաշտպանական ուժերը, ըստ էության, կարողացան լավագույնս դիմագրավել միջազգային ջիհադական կառույցներին: Ղարաբաղյան պատերազմում Ադրբեջանի կրած ծանր պարտությունը եւ աֆղանցիների մեծ կորուստներն էին պատճառը, որ մոջահիդները հեռացան Ադրբեջանից՝ շարժվելով Հյուսիսային Կովկաս եւ Բալկաններ:

<sup>1</sup> Իսլամում *մոջահիդը* (ծագում է արաբերեն *ջահադա* արմատից) հանուն Աստծո եւ հավատքի կռվող մարտիկն է: Իսլամական աշխարհում այս եզրը լայն տարածում ունի եւ բնորոշում է այն անձանց, ովքեր մասնակցում են ազգային, սոցիալական եւ կրոնաքաղաքական շարժումներին: Արեւմտյան եւ ռուսական լրատվամիջոցներում եւ ընդհանրապես գիտական գրականության մեջ *մոջահիդներ* ասելով շատ դեպքերում նկատի են առնվում իսլամական ծայրահեղական գրոհայինները:

<sup>2</sup> Արաբ աֆղանցիներն արաբական տարբեր երկրներից Աֆղանստանում կռված կամավորներն էին, որոնց գործունեությունն աֆղանական պատերազմի ընթացքում եւ դրա ավարտից հետո համակարգել է Սաուդյան Արաբիայի քաղաքացի Ուսամա Բեն Լադենը, ով 1988-ին մոջահիդների տվյալների հավաքագրման հիման վրա ստեղծեց «Ալ-Կաիդա» (բառացի՝ բազա) ահաբեկչական խմբավորումը:

<sup>3</sup> Hayk Demoyan, Karabakh Drama. Hidden Acts, Yerevan, 2003, էջ 91-92:

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս Letter dated 21 December 1994 from the Deputy Minister for Foreign Affairs of the Republic of Armenia addressed to the Special Rapporteur of the Commission on Human Rights on the question of the use of mercenaries (<http://www.un.org/documents/ga/docs/50/plenary/a50-390add1.htm>):

<sup>5</sup> Michael Taarnby, The Mujaheddin in Nagorno-Karabakh: A Case Study in the Evolution of Global Jihad ([http://www.realinstitutoelcano.org/wps/portal/rielcano\\_eng/Content?WCM\\_GLOBAL\\_CONTEXT=/Elcano\\_in/Zonas\\_in/International+Terrorism/DT20-2008](http://www.realinstitutoelcano.org/wps/portal/rielcano_eng/Content?WCM_GLOBAL_CONTEXT=/Elcano_in/Zonas_in/International+Terrorism/DT20-2008)):

## **ԱՂՐԲԵՋԱՆԻ ՈԱՋՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

### *Կարեն Վերանյան*

Վերջին տարիներին Աղրբեջանի ռազմական համակարգում արձանագրված նոր միտումները թույլ են տալիս լուրջ վերապահումներով մոտենալ Հարավային Կովկասում հնարավոր կայունության հեռանկարներին: Խոսքը վերաբերում է Աղրբեջանի ղեկավարության՝ սեփական ռազմարդյունաբերությունը զարգացնելուն ուղղված քայլերին, ինչի հիմքերը դրվեցին 2005թ. վերջին՝ Աղրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության հիմնադրմամբ: Չնայած նորակազմ նախարարության առջեկանգնած լուրջ հիմնախնդիրներին՝ կապված բարձրորակ կադրերի պատրաստման, անհրաժեշտ ենթակառուցվածքների արդիականացման, հսկայածավալ ֆինանսավորումների հետ, այնուհանդերձ, արտաքին ուժերի եւ առաջին հերթին՝ Թուրքիայի անմիջական օժանդակությամբ երկրում կատարվեցին ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման առաջին քայլերը:

Հաշվի առնելով մեր տարածաշրջանի ռազմական հավասարակշռության ներկայիս փխրուն իրավիճակը՝ Աղրբեջանի ռազմարդյունաբերության զարգացումը Հարավային Կովկասի կայունության համար կարող է աղետաբեր հետեւանքներ ունենալ: Հարեւան հանրապետության ռազմական համակարգում վերջին տարիներին արձանագրված միտումները կարելուր նշանակություն են ստանում ՀՀ ազգային անվտանգության համատեքստում եւ հայկական կողմից պահանջում են լուրջ եւ բազմապլան մոտեցումներ ցուցաբերել խնդրին:

### **Ռազմարդյունաբերության նախարարության ձեւավորումը**

Աղրբեջանի ռազմարդյունաբերական ոլորտի արդիականացման հիմքերը դրվեցին 2005թ. դեկտեմբերի 16-ին, երբ Աղրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ստորագրեց երկրի Հատուկ մեքենաշինության եւ կոնվերսավորման պետական կոմիտեի հիման վրա Աղրբեջանի Ռազմական արդյունաբերության նախարարության ստեղծման մասին հրամանագիրը: Նորակազմ նախարարության առջեւ ծառայած առաջնահերթ հիմնահարցերից մեկը վերաբերում էր երկրի ռազմարդյունաբերության ոլորտում ներգրավված խորհրդային գիտահետազոտական ինստիտուտների ու

մեքենաշինական գործարանների արդիականացմանը, միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը: Ներկայում նախարարության ենթակայության ներքո գործում են շուրջ 20 գիտահետազոտական ձեռնարկություններ եւ ինստիտուտներ: 2006թ. սեպտեմբերի 17-ին ստեղծվեց գիտահետազոտական ինստիտուտ, որի գործունեության հիմնական ուղղություններից են գիտահետազոտական, փորձարարակոնստրուկտորական աշխատանքները, ինչպես նաեւ Ադրբեջանի եւ արտերկրի բուհերում գիտական կադրերի պատրաստման կազմակերպումը: Երկրի ռազմարդյունաբերության ոլորտի աշխատանքները հիմնականում իրականացվելու են այդ ինստիտուտի անմիջական մասնակցության շրջանակներում:

2006թ. սկսած՝ ռազմարդյունաբերության նախարարության ենթակայության տակ դրվեց 1961թ. ստեղծված Բաքվի «Իքլիմ» ավիացիոն արտադրամիավորումը, որը մասնագիտացած է օդափոխիչների պատրաստման ոլորտում: 2006թ. սեպտեմբերից նախարարության շրջանակներում են գործում 1957թ. հիմնադրված եւ նավթագազային, էներգետիկ արդյունաբերությունում ավտոմատացման տեղեկատվական-վերահսկողական համակարգի նախագծման ոլորտում մասնագիտացած «Նավթագազավտոմատ» գիտաարտադրական ձեռնարկությունը, ավիաշինարարական արդյունաբերության համար ագրեգատների արտադրությունում մասնագիտացված «Ավիաագրեգատ» գործարանը, «Սենայեջիհազ» գիտաարտադրական ձեռնարկությունը (մասնագիտացած է տարբեր հեղուկների ճնշման ու ծախսման հաշվիչների, ազդանշանային համակարգերի արտադրության բնագավառում): 2006թ. սեպտեմբերի 27-ից նախարարության ենթակայության տակ է անցել նաեւ 1974թ. հիմնադրված Ադրբեջանի Ազգային տիեզերական գործակալությունը: Ընդհանուր առմամբ, 2009–2011թթ. Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունը նախատեսում է իրականացնել ողջ երկրում գործող շուրջ 53 օբյեկտների վերակառուցման աշխատանքները, որոնց շրջանակներում, Բաքվից զատ, ռազմարդյունաբերական նոր ձեռնարկություններ կհիմնվեն Գանձակում, Խաչմազում, Նախիջեւանում:

### **Համագործակցությունը Թուրքիայի հետ**

Ադրբեջանի իշխանությունները ոլորտի խթանման հարցում, անշուշտ, չեն կարող հիմնվել միայն ներքին միջոցների վրա, որոնք բավական սուղ են ռազմարդյունաբերության այս կամ այն ճյուղի, մասնավոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան ռազմարդյունաբերական համալիրի զարգացման համար: Ադրբեջանի ղեկավարությունը խնդրի իրագործումը մեծապես պայմանավորում է առաջին հերթին Թուրքիայի

ֆինանսական եւ տեխնոլոգիական ներգրավվածությամբ: Երկրի ռազմարդյունաբերության ոլորտի զարգացման գործում թուրքական կողմի մասնակցության լայն շրջանակները գալիս են փաստելու, որ երկու երկրների միջեւ ռազմավարական հարաբերություններում սկսվել է ռազմատեխնիկական համագործակցության որակապես նոր՝ առավել խորացված փուլ, ինչը վկայում է երկու միտումների մասին.

❖ Ադրբեջանը ձգտում է զարգացնել սեփական ռազմարդյունաբերությունը՝ թուրքական կողմի անմիջական շահագրգռվածությամբ, այլապես, չունենալով որեւէ լուրջ ֆինանսական ու ռազմատեխնիկական ներքին պոտենցիալ, Ադրբեջանի ղեկավարությունը չէր սկսի զարկ տալ սեփական ռազմարդյունաբերության ստեղծմանը՝ հաշվի առնելով նաեւ պրոֆեսիոնալ կադրերի, անհրաժեշտ ենթակառուցվածքների հետ կապված խնդիրները: Թուրքիայի շահագրգռվածությունը խոսում է վերջինիս կողմից Հարավային Կովկասի ռազմաքաղաքական զարգացումներում ներգրավվածության խորացման մասին, ինչի հնարավորությունները շոշափելի են դարձել հատկապես ռուս-վրացական օգոստոսյան պատերազմից հետո:

❖ Ոլորտի զարգացումը, հաշվի առնելով Ադրբեջանի ռազմականացման ներկայիս միտումներն ու երկրի ղեկավարության ռազմաշունչ հայտարարությունները, փաստում է ադրբեջանական կողմի՝ Ղարաբաղյան հիմնախնդիրը գլխավորապես ռազմական ճանապարհով լուծելու մտադրությունը, նեղացնում հիմնախնդրի խաղաղ կարգավորման հնարավորության սահմանները:

Երկկողմ ռազմական համագործակցության խորացման ուղղությամբ գործնական քայլեր սկսեցին իրականացվել հատկապես վերջին երկու տարիներին: 2008թ. դեկտեմբերի վերջին Ադրբեջան այցելեց Թուրքիայի ԶՈւ Գլխավոր շտաբի պետի տեղակալ Հասան Իզգիսը՝ երկու երկրների միջեւ ռազմարդյունաբերության զարգացման ոլորտում համագործակցության զարգացման հեռանկարների քննարկման նպատակով: Հանդիպման արդյունքում ռազմարդյունաբերության ոլորտում ստորագրվեցին մի շարք փաստաթղթեր, որոնցից մեկը վերաբերում է թուրքական առաջատար ռազմական ընկերություններից մեկի՝ «Ռոքեթսանի» եւ Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության «Իքլիմ» ձեռնարկության միջեւ ձեռք բերված համաձայնությանը՝ սպառազինության համատեղ արտադրության վերաբերյալ: Նախատեսվում է, որ 2009թ. մարտին այդ երկու կազմակերպությունները կսկսեն արտադրել 107 եւ 122 մմ տրամաչափի հրետանային համակարգեր, որոնց պահեստամասերն արտադրվելու են «Իքլիմ» ձեռնարկությունում, իսկ հրետանին՝ «Ռոքեթսան» ընկերու-

թյունում: 107 մմ տրամաչափի հրետանային համակարգերը հնարավորություն են տալիս իրականացնել շուրջօրյա մարտական գործողություններ՝ բոլոր եղանակային պայմաններում: TR-107 եւ TRB-107 տեսակի հրետանիներն ի վիճակի են խոցել մինչեւ 11 կմ հեռավորության թիրախները:

Ադրբեջանի ղեկավարությունը թուրքական առաջատար ընկերությունների հետ համագործակցում է նաեւ գիշերային տեսանելիության սարքավորումների, ռազմական էլեկտրոնիկայի համատեղ արտադրության բնագավառում: Մասնավորապես, ադրբեջանական կողմը «Ասելսան» ընկերության հետ ձեռք է բերել պայմանավորվածություն, որով նախատեսվում է Բաքվում նախաձեռնել հրազենի, գիշերային տեսանելիության սարքավորումների համատեղ արտադրություն: 2010թ. սկսած՝ Ադրբեջանը կսկսի դրանց սերիական արտադրությունը:

Վերջերս Ադրբեջանը ստացել է առաջիկա հինգ տարիներին Թուրքիայի ռազմարդյունաբերության ոլորտում նախատեսվող հիմնական նախագծերին մասնակցելու հրավեր: Թուրքիայի պաշտոնական աղբյուրների հաղորդմամբ, այդ ռազմարդյունաբերական նախագծերի շարքում, որոնցում Ադրբեջանի մասնակցության հարցը կորոշվի 2009թ. հունիսին, մասնավորապես, նշվում էին «Ազգային տանկ» (New Generation Wireless Systems, Altay National Tank), MilGem Boat («Պահակային եւ հակասուզանավային ռազմանավ» նախագիծ, որը ենթադրում է այս տեսակի ռազմանավի մոդելավորում ու կառուցում), Pilotless Vehicle (անօդաչու ինքնաթիռներ, 4 նախագիծ), Modernized Infantry Rifle նախագծերը: Երկու երկրների միջեւ բանակցություններ են ընթանում նաեւ համատեղ ռազմարդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման հեռանկարների շուրջ:

Վերջին շրջանում Թուրքիայի եւ Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունների ներկայացուցիչների հաճախակի փոխայցելությունների արդյունքում երկկողմ պայմանավորվածություններ են ձեռք բերվել այդ թվում եւ ադրբեջանցի կադրային զինվորականների պատրաստման ու որակավորման շուրջ: Մասնակցության պատրաստակամություն են հայտնել թուրքական առաջատար արտադրական այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են «Ասելսանը», FNSS թուրք-ամերիկյան ռազմական ընկերությունը, Թուրքիայի Մեքենաշինական եւ քիմիական արդյունաբերության կորպորացիան (MKEK), «Ռոքեթսանը»:

Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունը նախատեսում է լուրջ քայլեր ձեռնարկել սեփական ռազմարդյունաբերական արտադրանքն արտաքին շուկա արտահանելու, միջազգային սպառազինության ցուցահանդեսներին մասնակցելու ուղղությամբ, որտեղ կրկին զգալի է թուրքական կողմի միջամտությունը: Նախատեսվում է 2009թ.

Թուրքիայում անցկացվելիք սպառազինությունների ցուցահանդեսում ներկայացնել Ադրբեջանի ռազմարդյունաբերական առաջին արտադրանքը:

Ադրբեջանի ռազմարդյունաբերական նախարարության ենթակայության տակ գործող Ազգային տիեզերական գործակալությունը նույնպես սերտորեն համագործակցում է Թուրքիայի կառավարության հետ: Մասնավորապես, նախատեսվում է, որ 2009–2010թթ. Ադրբեջանը տիեզերք կուղարկի կապի առաջին ադրբեջանական արբանյակը՝ «Ազերաստրը»: Նախնական հաշվարկներով՝ դա կպահանջի շուրջ \$80-100 մլն:

### **Համագործակցություն այլ երկրների հետ**

Թուրքիայից բացի, Ադրբեջանի ռազմարդյունաբերության զարգացման գործին իրենց մասնակցությունն են առաջարկել նաև այլ պետություններ: Ադրբեջանը պայմանավորվածություններ է ձեռք բերել Հարավ-աֆրիկյան Հանրապետության հետ, որոնց համաձայն՝ 2009թ. ադրբեջանական կողմը կսկսի «Մատադոր» եւ «Մարադոր» տեսակի զրահապատ տեխնիկայի սերիական արտադրությունը: Արդեն քայլեր են ձեռնարկվում զրահապատ փոխադրիչ մեքենայի (ԵՏՔ) եւ հետեւակի մարտական մեքենայի (ԵՄՊ) արդիականացման ուղղությամբ:

Ադրբեջանը պայմանավորվածություններ է ձեռք բերել նաև Պակիստանի հետ, ըստ որոնց՝ առաջիկա տարիներին Պակիստանից ներմուծված տեխնոլոգիաների հիման վրա կսկսի արտադրել ավիացիոն ռումբեր, տանկերի ու հրետանու համար նախատեսված ռազմամթերք: Համատեղ ջանքերով լուրջ քայլեր են ձեռնարկվում նաև սեփական անօդաչու ինքնաթիռների արտադրության ոլորտում: Պաշտոնական տվյալներով՝ 2009թ. դրանց արտադրության լուրջ նախադրյալներ կան, 2016թ. Ադրբեջանն արդեն կկարողանա արտադրել ռազմական ուղղաթիռներ: 2009թ. հունվարի 23–28-ին աշխատանքային այցով Պակիստանում էր գտնվում Ադրբեջանի ռազմարդյունաբերության փոխնախարար Թոֆիկ Ռաֆիեւի գլխավորած պատվիրակությունը: Այցելության նպատակն էր երկու երկրների համագործակցության որոշակի ոլորտների հստակեցումը, այցելությունները Պակիստանի ռազմարդյունաբերության նախարարության ռազմական ձեռնարկություններ:

Ադրբեջանի ռազմարդյունաբերական ոլորտի զարգացման հարցում շահագրգռված է նաև ռուսական կողմը: 2006թ. աշնանը Ադրբեջանում ՌԴ նախկին դեսպան Վասիլի Իստրատովի արած հայտարարության համաձայն՝ Ռուսաստանը պատրաստ է աջակցել Ադրբեջանի ռազմարդյունաբերության նորաստեղծ ոլորտի զարգացմանը, զգալի ավանդ

ունենալ ռազմատեխնիկական, տեխնոլոգիական մասնագիտացման հարցերում: Նշենք, որ Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության ներկայիս ձեռնարկություններն ու ինստիտուտները ստեղծվել ու զարգացել են խորհրդային ժամանակաշրջանում, որոնց արդիականացման ու արտադրողական պոտենցիալի զարգացման հարցում ադրբեջանցիների համար անգնահատելի կլինի ռուսական կողմի մասնակցությունը: Ռազմարդյունաբերության ոլորտում ռուս-ադրբեջանական համագործակցության կարելու ուղղություններից է կադրերի վերապատրաստումը:

Ադրբեջանի ռազմարդյունաբերության զարգացմանը մասնակցելու պատրաստակամություն է հայտնել նաեւ Բելառուսը, որը բավական ուշագրավ է՝ հաշվի առնելով այդ երկրի՝ Չայաստանի հետ ունեցած բավական սերտ համագործակցության շրջանակները:

### **Չետեռություններ**

Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության ստեղծումը, առաջիկա տարիներին այս ուղղությամբ նախատեսվող ծրագրերը նոր լիցք են հաղորդում Ադրբեջանի ռազմականացման գործընթացին, ինչը լուրջ մարտահրավեր է վրաց-ռուսական օգոստոսյան պատերազմից հետո Չարավային Կովկասում ձեւավորված ռազմաքաղաքական փխրուն իրադրության համար: Դրա բացասական դրսեւորումներն արդեն արձանագրվել են վերջին շրջանում հայ-ադրբեջանական սահմանի տարբեր հատվածներում ադրբեջանական կողմից հրադադարի ռեժիմի խախտման դեպքերի ակտիվացման տեսքով:

Միաժամանակ, Ռուսաստան – Թուրքիա դաշինքի ձեւավորմամբ (տեղին է հիշատակել ս.թ. փետրվարի 13-ին Ռուսաստանի ու Թուրքիայի նախագահների ստորագրած հռչակագիրը) եւ Թուրքիայի անմիջական շահագրգռվածությամբ՝ ադրբեջանական կողմը արտաքին լուրջ հենարան է ստանում երկրի ռազմական պոտենցիալի, նորաստեղծ ռազմարդյունաբերության զարգացման առումով:

Այս ամենը Չայաստանի ու Ադրբեջանի միջեւ առկա ռազմական հավասարակշռության՝ այդ հավասարակշռությունը երաշխավորող Եվրոպայում սովորական գինված ուժերի մասին պայմանագրով նախատեսված քվտանների պահպանումը դարձնում է հարցական, ինչը միջազգային հանրությունից պահանջում է համարժեք արձագանք՝ տարածաշրջանի հնարավոր ապակայունացումից խուսափելու համար:

## **ՉԻՆԱՍՏԱՆ – ԻՐԱՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾ ԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ Աղավնի Հարությունյան**

Ենթադրվում է, որ Չինաստանի միջուկային համագործակցությունն Իրանի հետ սկիզբ է առել 1980-ականների կեսերին, ավելի կոնկրետ՝ 1985թ. հունիսին, Իրանի մեջլիսի խոսնակ Հաշեմի Ռաֆսանջանիի եւ պաշտպանության նախարար Մուստաֆա Մուհամեդ Նաջարի Պեկին կատարած պետական այցելության շրջանակներում գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ պայմանագրի ստորագրմամբ: Պայմանագրի գաղտնի՝ միջուկային համագործակցության մասով Պեկինը պարտավորվում էր օժանդակել 1984թ. Սպահանում հիմնված Իրանի գլխավոր հետազոտական գործարանի կառուցման աշխատանքներին եւ Իրանին սուբկրիտիկական միջուկային երկու ռեակտոր տրամադրել: Սպահանի միջուկային կենտրոնի տասնյակ ինժեներներ 1988–1992թթ. ընթացքում որակավորում են ստացել ՉԺՀ-ում: Իսկ 1989թ. սեպտեմբերին ՉԺՀ-ի եւ ԻԻՀ-ի միջեւ ատոմի խաղաղ օգտագործման ոլորտում համագործակցության վերաբերյալ պայմանագիր է ստորագրվել, որն Իրանի խորհրդարանը վավերացրել է միայն 1993թ.:

Իրանի եւ ՉԺՀ միջուկային համագործակցության խորացմանը նպաստեցին\* ԽՍՀՄ փլուզումն ու սառը պատերազմի ավարտը, որի արդյունքում ԱՄՆ-ը աշխարհի միակ գերտերության իր կարգավիճակը հավերժացնելու նպատակով գլոբալ ռազմավարության առանցք դարձրեց ԱՄՆ-ին հակազդելու ունակ ուժի կենտրոնների ձեւավորման կանխարգելումը: Նման ուժի կենտրոններ էին դիտվում իսլամական եւ սինական երկրները, որոնց թվում՝ Իրանը եւ Չինաստանը: Վերջիններս, գիտակցելով ԱՄՆ-ի կողմից թիրախի վերածվելու եւ «կանխարգելիչ հարվածի» տակ հայտնվելու հավանականությունը, Միացյալ Նահանգների դեմ համագործակցելու եւ սովորական սպառազինության գծով նրա առավե-

---

\* Իրանի եւ ՉԺՀ միջուկային համագործակցության խորացմանը նպաստեց նաեւ 1980–1990-ականներին ԱՄՆ ուժգին ճնշման տակ Իրանում միջուկային գործարանի կառուցման վերաբերյալ մի շարք պայմանագրերից թեհրանի գլխավոր մատակարարների՝ Արգենտինայի, Հնդկաստանի եւ այլ երկրների հրաժարումը, ինչպես նաեւ 1991թ. «Փոթորիկ անապատում» գործողությունը:

լուծյանը հակաշիռ ստեղծելու նպատակով՝ փորձում էին համատեղել իրենց ջանքերը միջուկային տեխնոլոգիաների ձեռքբերման եւ զարգացման ոլորտում:

Արդեն իսկ 1991թ. հուլիսին Իրանում ՉԺՅ վարչապետ Լի Փենի եւ ԻԻՅ նախագահ Ռաֆսանջանիի հանդիպման ընթացքում կողմերն արտահայտվեցին ԱՄՆ համաշխարհային տիրապետության ու միջազգային հարաբերություններում ամերիկյան կարգերի հաստատման դեմ: Կողմերի միջեւ պայմանագիր ստորագրվեց Իրանի միջուկային ռեակտորի տեխնիկական վերազինման նպատակով չինացի փորձագետների տրամադրման եւ Սպահանի միջուկային գործարանի համար հետազոտական ռեակտոր (20-30 մվտ հզորությամբ) վաճառելու վերաբերյալ: 1991թ. նոյեմբերին Չինաստանի արտգործնախարարն անգամ պաշտոնապես ընդունեց 1989թ. եւ 1991թ. Իրանի եւ ՉԺՅ-ի միջեւ միջուկային պայմանագրերի կնքման փաստը՝ հավաստելով, որ Իրանին տրամադրված միավորները պետք է օգտագործվեն միայն խաղաղ նպատակներով՝ Ատոմային էներգիայի Միջազգային Գործակալության՝ ԱԷՄԳ (IAEA) հսկողության տակ: Չինական կողմը նաեւ փաստեց, որ առաջարկվող 20 մվտ հզորությամբ հետազոտական ռեակտորը չափազանց փոքր է տարածման վտանգներ կայացնելու առումով: Իր հերթին Թեհրանը հավաստեց, որ համաձայն է ԱԷՄԳ տեսուչների ստուգայցերին եւ պնդելով միջուկային ոլորտի զարգացմամբ եւ խաղաղ հետազոտություններով զբաղվելու իր օրինական իրավունքը՝ միաժամանակ հերքեց միջուկային զենքի ստեղծման կամ դրա զարգացման ուղղությամբ իր մտադրությունները:

1992թ. սեպտեմբերին Իրանի նախագահ Ռաֆսանջանիի՝ Չինաստան կատարած այցի ընթացքում կողմերի միջեւ պայմանագիր ստորագրվեց միջուկային ոլորտում համագործակցության շուրջ, որի շրջանակներում ՉԺՅ-ն պարտավորվում էր Սպահանի միջուկային կենտրոնի համալիր-հետազոտական աշխատանքների իրականացման նպատակով տարբեր սարքավորումներ եւ 300 մվտ հզորությամբ երկու ռեակտորներ տրամադրել: Նշվում էր ԱԷՄԳ երաշխիքների ներքո պայմանագրի հետապնդած խաղաղ նպատակների մասին:

1992թ. փետրվարի եւ 1993թ. նոյեմբերի ոչ պաշտոնական ստուգայցերից հետո ԱԷՄԳ պաշտոնյաները հայտարարեցին, որ Իրանի միջուկային գործունեությունը հետապնդում է խաղաղ նպատակներ: Մինչդեռ ԱՄՆ-ը, «հանդգնված լինելով» միջուկային զենքի ստեղծման Իրանի գաղտնի մտադրության մեջ, ճնշում գործադրեց ՉԺՅ-ի վրա, որն էլ 1992թ. հոկտեմբերին պաշտոնապես հրաժարվեց Իրանի հետ գործարքից՝ բացատրելով այն տեխնիկական պատճառներով: Սակայն դրանով փոքրամասշտաբ

միջուկային հետազոտությունների և տեխնոլոգիաների նախագծերի ուղղությամբ չին-իրանական համագործակցությունը չդադարեց, որի մասին են վկայում կողմերի միջև 1993–1995թթ. միջուկային ոլորտում ստորագրված մի շարք պայմանագրերը:

Սակայն 1996թ. մայիսին ԱՄՆ շարունակվող ճնշման տակ ՉԺՀ-ն ստիպված եղավ հրաժարվել Իրանին միջուկային տեխնոլոգիաների տրամադրումից կամ երաշխավորված միջուկային ծրագրերի սատարումից: 1997թ. հոկտեմբերին Պեկինը Վաշինգտոնին հավաստիացրեց համագործակցության երկու ոլորտով սահմանափակվելու և Իրանի միջուկային ծրագրերին ցուցաբերվող նոր աջակցությունից հրաժարվելու մասին: ԿՀՎ-ն 1998թ. Կոնգրեսին ներկայացվող իր զեկույցում հաստատեց, որ 1997թ. ՉԺՀ-ը դադարեցրել է ԻԻՀ-ի հետ միջուկային ոլորտում համագործակցությունը: ԱՄՆ ճնշման տակ 1999թ. չինական կողմը համաձայնվեց դադարեցնել նաև 1998-ից Իրանին ուրանի հարստացման ոլորտում օգտագործվող ֆտորաջրածնի վաճառքը:

Սակայն չին-իրանական միջուկային համագործակցությունը վերսկսվեց 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո, երբ «զլորբալ ահաբեկչության դեմ պայքարը» դարձավ ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության հիմնականատակ՝ վերջինիս «իրավունք վերապահելով» զարգացման ինքնուրույն ուղի բռնած երկրների (ոմանց պիտակավորելով իբրև «չարիքի առանցքի երկրներ») առաջխաղացումը կանխելու նպատակով՝ ճնշում կամ պատժամիջոցներ կիրառել նրանց նկատմամբ: Աֆղանստանի հակաահաբեկչական գործողության և իրաքյան ներխուժման արդյունքում Մերձավոր Արևելքում ու Կենտրոնական Ասիայում ամերիկյան ռազմահանգրվանների տեղակայումը, տարածաշրջանի երկրների «ժողովրդավարացման» ԱՄՆ մտադրությունները, ինչպես նաև Հնդկաստանի ու Պակիստանի՝ միջուկային տերություններ լինելու փաստը մարտահրավերներ էին, որոնք չէին կարող չմտահոգել Պեկինին և Թեհրանին: Իրանն իր անվտանգության հիմնական երաշխիք դիտելով սեփական միջուկային զենքի ստեղծումը՝ հայացքը կրկին ուղղեց դեպի Պեկին: Անշուշտ, Իրանում իրաքյան կամ աֆղանական սցենարների կրկնության ու Մերձավոր Արևելքի ողջ նավթն ԱՄՆ հսկողության տակ հայտնվելու հեռանկարը չէր բխում նաև Պեկինի շահերից: Վերջինս խիստ շահագրգռված էր Պարսից ծոցից ածխաջրածնային հումքի կայուն առաքման և իր աշխարհաքաղաքական նկատառումներում Իրանին իբրև դիվանագիտական լծակ օգտագործելու հարցում:

Եվ երբ 2004թ. ԱՄՆ-ը, Թեհրանին մեղադրելով Չտարածման պայմանագրի պայմաններին հետամուտ չլինելու մեջ, առաջարկեց իրանական

«դոսյեն» հանձնել ՄԱԿ ԱԽ քննարկմանը, ՉԺՀ-ը, պաշտպանելով ճգնաժամը երկխոսության միջոցով խաղաղ կարգավորելու շուրջ ԵՄ գրաված դիրքորոշումը, սեպտեմբերին կասեցրեց այդ գործընթացը: Պեկինը ողջունեց ուրանի հարստացումը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ «եվրատեռյակի» եւ Իրանի միջեւ համաձայնագրի ստորագրման փաստը, որին Թեհրանը գնաց ԵՄ-ի կողմից առաջարկվող անվտանգության, տնտեսական երաշխիքների դիմաց, ինչու չէ, նաեւ դիվանագիտական մեկուսացումից խուսափելու նպատակով:

2005թ. սկզբին ԻԻՀ եւ Հյուսիսային Կորեայի միջուկային զենքի ստեղծման հավակնությունների դեմ ուժի կիրառման հնարավորության շուրջ Բուշի վարչակազմի հայտարարություններից հետո Իրանը օգոստոսից վերսկսեց Սպահանի միջուկային գործարանի ուրանի հարստացման գործընթացը: Այս անգամ, 2006թ. հունվարի կեսին, «եվրատեռյակը» միացավ Իրանի գործը ՄԱԿ ԱԽ քննարկմանը հանձնելու նպատակով Ռուսաստանի եւ ՉԺՀ աջակցության ձեռքբերման ուղղությամբ ԱՄՆ դիվանագիտական ջանքերին: Իսկ երբ 2006թ. փետրվարին ԱԵՄԳ կառավարիչների խորհուրդը քվեարկեց Իրանի գործը ՄԱԿ ԱԽ-ին հանձնելու օգտին, Պեկինը միացավ Թեհրանի նկատմամբ պատժամիջոցների կիրառման խնդիրը ՄԱԿ ԱԽ-ին չհանձնելու կամ խնդրի քննարկումը հետաձգելու ուղղությամբ Մոսկվայի դիվանագիտական ջանքերին:

Այնուհանդերձ, 2006թ. հուլիսին ՄԱԿ ԱԽ-ին ի վերջո հաջողվեց ՉԺՀ-ից, Ռուսաստանից եւ Ֆրանսիայից կորզել 1696-րդ բանաձեւի ընդունման հավանությունը, որով նախատեսվում էր նախքան օգոստոսի 31-ը, Իրանի ուրանի հարստացման գործունեությունը չդադարեցնելու դեպքում, վերջինիս նկատմամբ ՄԱԿ Խարտիայի 41-րդ հոդվածով նախատեսվող պատժամիջոցներ կիրառել: Հաշվի առնելով այն փաստը, որ Իրանը չէր պատրաստվում ենթարկվել ՄԱԿ ԱԽ պահանջներին, Պեկինն ու Մոսկվան պատժամիջոցների պարտադրման շուրջ օգոստոսի 31-ին հաջորդած ԱԽ քննարկումների ընթացքում փորձեցին դրանք նվազագույնի հասցնել, հատկապես պատժամիջոցների կիրառումը ՉԺՀ-ի եւ Ռուսաստանի տնտեսական շահերին հնարավոր վտանգ ներկայացնելու դեպքում:

Բնականաբար, Պեկինին չէր կարող չմտահոգել Իրանի նավթագազային առաքումների մասնակի կամ լրիվ կորստի հնարավորությունը, որոնց փոխհատուցման եւ մատակարարման մյուս աղբյուրների ընդլայնման նպատակով ՉԺՀ նախագահ Հու Ցզինտաոն դեռեւս 2006թ. ապրիլին այցելել էր Մերձավոր Արեւելքի մի շարք երկրներ, այդ թվում՝ Սաուդյան Արաբիա:

Ուշագրավն այն է, որ 2007թ. հունվարի 10-ին Պեկինում Իսրայելի վարչապետ Է.Օլմերթը ՉԺՅ Պետխորհրդի նախագահ Վեն Չիաբաոյի հետ բանակցությունների ընթացքում, «ըմբռնունով մոտենալով» ՉԺՅ-ի եւ ԻԻՅ-ի միջեւ էներգետիկ եւ առետրի ոլորտում բարձր մակարդակի համագործակցությանը, առավել կարեւորեց «Մերձավոր Արեւելքի կայունությանը վտանգող իրանական սպառնալիքի դեմ պատժամիջոցների կիրառման ուղղությամբ ՉԺՅ՝ իբրեւ ՄԱԿ ԱԽ մշտական անդամի աջակցությունը»: Պեկինը մերժեց Իսրայելի կոչը՝ հստակեցնելով, որ Չինաստանը դեմ է Իրանի միջուկային զենքի ստեղծմանը, սակայն ո՛չ խաղաղ նպատակներով միջուկային ծրագրերի զարգացմանը:

Պեկինում քաջ գիտակցում են, որ Իրանի նկատմամբ ճնշումը, լայն իմաստով, պայմանավորված է ոչ այնքան Թեհրանի միջուկային ծրագրերի, որքան ԱՄՆ եւ նրա որոշ դաշնակիցների, հատկապես Իսրայելի համար անհանդուրժելի իրանական վարչախմբի բնույթով: Մինչդեռ Իրանի հետ լավ հարաբերությունների մեջ գտնվող Չինաստանը մտահոգված չէ նրա միջուկային ծրագրի հարցում՝ անշուշտ, այն ԱԷՄԳ հսկողության տակ մնալու նախապայմանով:

## ՃԳՆԱԺԱՄԻ ՕՐԻՆԱԶՎՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Չեղարկումները պետության համար

*Անցյալի բոլոր ճգնաժամերը որոշակի, երբեմն տարօրինակ ազդեցություն են գործել պետական ինստիտուտների վրա: Քիչ հավանական է, որ ներկայիս ճգնաժամը բացառություն չլինի:*

Ավանդաբար, ճգնաժամերի շրջանում պետական կառույցներն աշխատանքի շուկայում առավել մրցունակ են լինում: «Դիմակայելով Դաշնային կառավարությունում մարդկային կապիտալի ճգնաժամին» գրքի հեղինակ Ջեյ Լեյբովիտցը նշում է, որ հաջողության գաղտնիքը չափազանց պարզ է. պետությունն, ի տարբերություն առևտրային կառույցների, միշտ իր տնօրինության տակ ունի ֆինանսական պաշարներ եւ կարող է չինովնիկներին երաշխավորել մշտական վարձատրություն ու սոցիալական արտոնություններ: Եթե նույնիսկ պետական աշխատավարձը ցածր է «առևտրայինից», շատ արհեստավարժներ ընտրություն են կատարում պետության օգտին, քանզի այն խոստանում է մեծ կայունություն (հայտնի է, որ պետական կառույցները մասնավոր ընկերություններից անհամեմատ ավելի հազվադեպ են հաստիքների կրճատում անցկացնում): Այդ պատճառով, ճգնաժամերի շրջանում պետական աշխատանքի համբավը զգալիորեն աճում է:

«Ճգնաժամը եւ ծովահրեշը. ամերիկյան կառավարության զարգացման կրիտիկական դրվագները» գրքի հեղինակ Ռոբերտ Չիթսը նշում է, որ այդ գործընթացների արդյունքը, որպես կանոն, լինում է վարչարարության որակի բարելավումը, ինչը երբեմն հանգեցնում է ողջ պետական ապարատի եւ զինված ուժերի գործունեության դրական փոփոխությունների: Սակայն այս փոփոխությունները չեն ինքնին, իսկ դրանց համար հասարակությունը ստիպված է թանկ վճարել: Չիթսի կարծիքով, բանն այն է, որ ճգնաժամերի ժամանակ մարդիկ հակված են ավելի վստահել իշխանությանն ու ենթադրել, թե չինովնիկները գործում են առավել արդյունավետ, քան տեղի է ունենում իրականում: Ընդ որում, տաղանդավոր չինովնիկները, առաջին հերթին, հաջողությամբ լուծում են զուտ վարչարարական խնդիրներ. ճգնաժամերին իշխանական կառույցների չափերը շարունակ աճում են (ԱՄՆ պատմության մեջ դեռ

երբեք նրանց չափերը չեն վերադարձել մինչճգնաժամային վիճակին՝ այնպես, ինչպես նրանց լիազորությունները: Այսպիսով, տարօրինակ է, բայց երկարաժամկետ հեռանկարում տաղանդների հոսքը դեպի իշխանություն սոսկ օժանդակում է իշխանության դեգրադացմանը:

Նմանատիպ փոխակերպությունները տեղի են ունեցել ճգնաժամ ապրած եւ այլ պետություններում: Օրինակ՝ Ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի ուսումնասիրությունը նվիրված էր Ինդոնեզիայի պետական կառավարման որակի վրա ֆինանսական ճգնաժամի ազդեցությանը: Այդ ճգնաժամը բերեց իշխանությունից զեներալ Սուխարտոյի հեռացման, որը 1966–1998թթ. անփոփոխ ղեկավարում էր երկիրը, եւ առաջին ժողովրդավարական ընտրությունների անցկացման: Երկար ժամանակից հետո, առաջին անգամ, իշխանություն մուտք գործեցին բիզնեսի ոլորտի հայրենասիրաբար տրամադրված բազում արհեստավարժ կառավարիչներ: Ինդոնեզական պետական կառավարման որակի գնահատման ժամանակ օգտագործվեցին Համաշխարհային բանկի (ՀԲ) համապատասխան ցուցանիշները. համեմատվեցին միջճգնաժամային 1996 եւ հետճգնաժամային 2005 թվականները: Ինչպես պարզվեց, 2005թ. ցուցանիշը, գործնականում, բոլոր առումներով ավելի վատն էր, ոչ մեծ առաջընթաց գրանցվել էր միայն կոռուպցիայի դեմ պայքարում եւ օրենքի իշխանության ապահովման գործում: Ավելին, ճգնաժամի ժամանակ երկրում իշխանության կենտրոնացման մակարդակն իջել էր, իսկ նրա ավարտից հետո՝ կրկին վերադարձել Սուխարտոյի դարաշրջանի մակարդակին:

Տնտեսական ճգնաժամի պայմաններում պետական ինստիտուտները հաճախ լինում են առավել կոռումպացված, ինչը դառնում է տնտեսության վրա նրանց ազդեցության աճի բնական հետեւանք: Հաճախ հենց չինովնիկներից է կախված առեւտրային կառույցների ապագան. օրինակ՝ պետական պատվերների բաշխումը կամ ֆինանսական օգնության հատկացումը: Դա ստեղծում է սնուցող միջավայր կոռուպցիայի համար: Առաջին ահազանգերն արդեն հնչել են. 2009թ. սկզբին «Transparency International» ազդեցիկ հասարակական կազմակերպությունը զգուշացրեց ողջ աշխարհում կոռուպցիայի հնարավոր աճի մասին:

Տնտեսական ճգնաժամի եւս մեկ դրսեւորում է զինվորական ծառայության ժողովրդականության աճն այն պետություններում, որտեղ բանակը փոխադրվել է արհեստավարժության ռեյսերի վրա: Երիտասարդ մարդիկ, որոնց մոտ փոքր են քաղաքացիական կյանքում դրսեւորվելու հնարավորությունները, մեծ հաճույքով են բանակի հետ կնքում պայմանագրեր: Օրինակ՝ 2008թ. վերջին երեք ամիսներին ԱՄՆ բանակը հինգ տարիների

ընթացքում առաջին անգամ գերակատարեց զորակոչիկների հավաքագրման պլանը:

Ներկայիս տնտեսական ճգնաժամը նաև բացասական ազդեցություն է թողնում բնապահպանական քաղաքականության (օրինակ՝ գլոբալ տաքացման դեմ պայքարի եւ այլընտրանքային էներգետիկայի զարգացման) վրա: Օրինակ՝ «Worldwatch» հետազոտական ինստիտուտը կանխատեսում է, որ ճգնաժամը կհանգեցնի «ջերմոցային գազերի» արտանետումների քանակի եական նվազման, որոնք օժանդակում են գլոբալ տաքացմանը: Այն կապված է արդյունաբերական արտադրության ծավալների կրճատման եւ ավտոմոբիլային վառելիքի սպառման նվազման հետ: Այս փաստը, ինչպես նաև միջազգային ընկերակցության եւ շատ պետությունների ղեկավարությունների առաջնայնությունների տեղաշարժը, տաքացման դեմ պայքարը դարձնում են պակաս կարելիոր գործ, որն անխուսափելիորեն կանդրադառնա համապատասխան հետազոտությունների ու ծրագրերի ֆինանսավորման ծավալների վրա: Համանման պատմություն տեղի ունեցավ այլընտրանքային էներգետիկայի զարգացման հետ. ճգնաժամը բերեց նավթի կտրուկ գնազրկման, որի պատճառով ավտոմոբիլային բիովառելիքը (սպիրտ, բուսական յուղ եւ այլն) բենզինից թանկ ստացվեց, ինչը նրա արտադրությունը դարձնում է ոչ շահավետ:

2009թ. սկզբին ԱՄՆ Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալությունն ուշադրություն դարձրեց եւս մեկ տազնապալի փաստի վրա. հունքի համաշխարհային գների անկումն անշահութաբեր դարձրեց աղբի վերամշակումը: Օրինակ՝ 2008թ. դեկտեմբերին մակուլատուրայի մեկ տոննայի գինն ընկավ մինչեւ 25 դոլար (2007թ. դեկտեմբերի 105 դոլարի դիմաց): Արդյունքում՝ ընկերությունները, որոնք վերամշակում են աղբը, կրում են լուրջ վնասներ եւ նախընտրում են պարզապես պահեստավորել այն: ԱՄՆ տնտեսական ճգնաժամերի պատմությունը ցույց է տալիս, որ դա ավանդական երեւոյթ է: Պատմաբան Կառլ Ցիմրիմզը «Կանխիկ գումար ձեր աղբի համար. աղբի վերամշակումն Ամերիկայում» գրքում բերում է նմանատիպ բազմաթիվ օրինակներ: Այսպես, 1873թ. ճգնաժամին, մեկ տարուց էլ պակաս ժամանակաընթացքում, մետաղի ջարդոնի գինն ընկավ երկու անգամ, ինչը հանգեցրեց հարյուրավոր ընկերությունների սնանկացման, որոնք զբաղվում էին թափոնների հավաքմամբ, տեսակավորմամբ ու վերամշակմամբ: Համանման պատմություն տեղի ունեցավ Մեծ դեպրեսիայի ժամանակ. չորս տարվա ընթացքում (1929–1933թթ.) այդ շուկայի ծավալները նվազեցին տասն անգամ, որի շնորհիվ ԱՄՆ խոշոր քաղաքների մերձակայքերը վերածվեցին վիթխարի աղբանոցների:

## Յետեւանքները հանրության համար

*Յուրաքանչյուր տնտեսական ճգնաժամ հանգեցնում է մարդկանց կենսակերպի եւ աշխարհընկալման փոփոխության: Երբեմն այդ փոփոխությունները կարճաժամկետ են եւ նվազ նշանակալից, երբեմն՝ չափազանց էական ու երկարաժամկետ:*

Ամերիկյան Առողջապահության համակարգի փոփոխությունների ուսումնասիրության կենտրոնի տվյալներով, 2008թ. վերջին ամերիկացիների գրեթե 20 տոկոսը բժշկական հաշիվների վճարման հետ կապված դժվարություններ կրեց: Արդյունքում՝ նրանք սահմանափակեցին իրենց կողմից ընդունվող դեղամիջոցների քանակը, սկսեցին բժշկներին դիմել սոսկ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Կենտրոնը կանխատեսում է, որ ճգնաժամի խորացմանը զուգընթաց, այդ միտումները կարող են միայն սաստկանալ: Միաժամանակ, ԱՄՆ առողջապահության նախարարությունը հայտարարեց, որ 2008թ. Միացյալ Նահանգների հոսպիտալները նկատելիորեն քիչ են անցկացրել բուժական գործողություններ եւ «ոչ պարտադիր» վիրահատություններ: ԱՄՆ ճգնաժամի ալիքի վրա սկսեցին քիչ կատարել նաեւ տեսողության լազերային շտկման ու կոսմետիկ վիրահատություններ:

Նման իրավիճակ ստեղծվում է եւ այլ արդյունաբերական զարգացած պետություններում: Օրինակ՝ Սեուլի ազգային համալսարանի ու ՉԲ համատեղ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Չարավ. Կորեայի բնակիչները (հատկապես միջին եւ ցածր ապահովության ընտանիքները) ճգնաժամի ազդեցության տակ հիմնովին կրճատել են իրենց բժշկական ծախսերը: Առաջին հերթին, նրանք նախընտրում են տնտեսել բուժ. մասնագետների այցելությունների վրա:

Տնտեսական խնդիրների հետեւանքներից է կրոնի ժողովրդականության աճը: Օրինակ՝ Տեխասի համալսարանի հետազոտությունները ցույց տվեցին, որ ԱՄՆ-ում 1968–2004թթ. տեղի ունեցած տնտեսական ճգնաժամների ողջ ժամանակահատվածում բողոքական եկեղեցիների ծխականների թվաքանակը զգալիորեն ավելացել է: Սակայն կան նաեւ հակառակ տվյալներ. օրինակ՝ Տնտեսական եւ զարգացման ռեսուրսների հետազոտման կենտրոնը վերլուծեց ասիական տնտեսական ճգնաժամի ազդեցությունը Թաիլանդի, Չարավ. Կորեայի եւ Ֆիլիպինների հասարակության վրա: Ինչպես պարզվեց, տնտեսական դժվարությունների ժամանակ մարդիկ սկսել են զգալիորեն հազվադեպ հաճախել եկեղեցի,

մզկիթ ու տաճար եւ անգամ քիչ աղոթել: Պատճառը պարզ էր. այդ երկրների շատ բնակիչներ փորձել էին աշխատել երկու եւ ավելի աշխատավայրում, էժան մթերքի ու ապրանքի հայթայթման վրա շատ ժամանակ էին վատնել եւ այլն, ինչը կրճատել էր այն ժամանակը, որը նրանք կարող էին տրամադրել հոգեւոր կյանքին:

Ճգնաժամը, որպես կանոն, հանգեցնում է ռեստորանների, բարերի ու սրճարանների (որտեղ ալկոհոլ է վաճառվում) ժողովրդականության նվազմանը, բայց այն ամենեւին էլ չի նպաստում սթափությանը: Սպիրտային օգտագործողները սկսում են խանութներից գնել առավել էժանագին խմիչքները՝ նախընտրելով դրանց ամենաէժան տեսակները: Ընդ որում, մարդիկ ավելի շատ են խմում, որպեսզի հանեն սթրեսը եւ տրվեն մոռացության: Շատ են սկսում խմել եւ այն մարդիկ, որոնք մինչ դժվար ժամանակների գալը չեն հրապուրվել «ժամանցի» այդ տեսակով:

Այս ֆենոմենը գործնականում նկատվել է աշխարհի բոլոր ոչ մուսուլմանական երկրներում: Օրինակ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2004թ. հրապարակեց Արգենտինայի ուսումնասիրության արդյունքները, որը դրանից քիչ առաջ ապրել էր խոշորամասշտաբ ֆինանսական ճգնաժամ: Ճգնաժամի առաջին տարում հաճախումը հասարակական սննդի հիմնարկություններ, որտեղ ալկոհոլ էր վաճառվում, նվազել էր ավելի քան 25 տոկոսով, իսկ գինու խանութներում վաճառքն ավելացել էր 32 տոկոսով: Նման բան տեղի է ունենում եւ այսօր: Օրինակ՝ «Brown-Forman» կորպորացիան, որն արտադրում է այնպիսի խմիչքներ, ինչպիսիք են «Jack Daniels» վիսկին եւ «Finlandia» օղին, 2009թ. սկզբին հայտարարեց վաճառքի կայուն աճի մասին:

Հանցագործության մակարդակի աճի եւ տնտեսական վայրիվերումների միջեւ կապը միանշանակորեն ապացուցված չէ, թեեւ կան շատ գիտնականներ, որոնք համոզված են, որ այն լիովին իրական է: Օրինակ՝ Հետաքննությունների դաշնային բյուրոյի բազմամյա վիճակագրությունը միանշանակ կերպով ցույց է տալիս, որ ֆինանսական ճգնաժամերին զգալիորեն աճում է խարդախությունների թիվը: Հիպոթեզային ակտիվների ինստիտուտի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2008թ. ԱՄՆ-ում հիպոթեքի հետ կապված խարդախությունների թիվն աճել է 45 տոկոսով: Միաժամանակ, աճում է բռնության (այդ թվում նաեւ ընտանեկան) մակարդակը: ԱՄՆ Արդարադատության ազգային ինստիտուտի տվյալներով՝ նմանօրինակ հանցագործների թիվը հատկապես կտրուկ աճում է այն ընտանիքներում եւ շրջաններում, որոնք անհամեմատ ավելի են տուժել գործազրկությունից ու եկամտի նվազումից:

Այս առումով, հատկանշական է Նյու Յորքի պատմությունը: 1970-ական թվականներին այդ մեզապոլիսում հանցագործության բուռն աճը համընկավ ԱՄՆ խոշորամասշտաբ ճգնաժամի հետ: Ուղլ Սթրիթի ընկերությունները կրեցին կորուստներ, նրանցից ստացվող հարկային մուտքերը նվազեցին, ինչը հանգեցրեց նրան, որ քաղաքապետարանը ստիպված եղավ կրճատել ոստիկանների թիվը եւ չքավորների համար նախատեսված սոցիալական ծրագրերը: Դա բերեց նրան, որ Նյու Յորքում ապրելը դարձավ տհաճ ու վտանգավոր. քաղաքը լքեցին մեկ միլիոնից ավելի մարդ, հիմնականում՝ միջին խավի ներկայացուցիչները: Այն ժամանակ տարածված կարծիք կար (որը, բարեբախտաբար, կեղծ դուրս եկավ), թե Նյու Յորքը մեռնում է:

Տնտեսական ճգնաժամը նաեւ օժանդակում է նրան, որ կազմակերպված հանցագործությունը օրինական բիզնես-կառույցների վրա վերահսկողություն հաստատելու հնարավորություն ստանա: Այսպես, Հանցագործության եւ արդարադատության հարցերով ՄԱԿ միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտը պարզել է, որ կազմակերպված հանցագործ խմբավորումները, որոնցից շատերը կապված են թմրանյութերի առևտրի հետ, այսօր գնում են արժեթղթերի մեծ փաթեթներ ու խնդրահարույց բանկերում կատարում զգալի ֆինանսական ներարկումներ:

Ավանդաբար, տնտեսական ճգնաժամը հանգեցնում է զբոսաշրջիկների թվի կրճատման: Տրամաբանությունն այստեղ բավական պարզ է. եկամուտների նվազման եւ գործազրկության աճի դեպքում մարդկանց մոտ քիչ ազատ գումար է մնում, որը նրանք կարող են ծախսել հանգստի ու զվարճանքների վրա: Սակայն այս կախվածությունը բացարձակ չէ: Օրինակ՝ Քվինսլենդի համալսարանը վերլուծել է 1990-ական թվականների վերջի ասիական ճգնաժամի հետեւանքները միջազգային զբոսաշրջության տեղական արդյունաբերության վրա: Ինչպես պարզվեց, այդ երկրներ այցելած արտասահմանյան զբոսաշրջիկների թիվն իրոք կրճատվել է, բայց այն պետություններում, որոնք դեվալվացրել են իրենց ազգային արժույթը, կտրուկ անկում չի նկատվել, իսկ շուկայի վերականգնումը սկսել է անսպասելիորեն շուտ:

Արտասահմանյան Կրթության ինստիտուտի տվյալները ցույց են տալիս, որ տնտեսական ճգնաժամերին էականորեն նվազում է արտերկրի բուհերում ուսման մեկնող ուսանողների թիվը: Որպես կանոն, նրանք նախընտրում են առավել հասանելի այլընտրանքներ իրենց մոտ՝ հայրենիքում: Վերջին ամիսներին նաեւ հայտնվեցին լուրեր, որոնք ցույց են տալիս, որ այդ գործընթացն սկսվել է. արտասահման ուսման մեկնող

երիտասարդների թվաքանակի կտրուկ նվազման մասին արդեն հայտնել են Չարավ. Կորեայի եւ Մալայզիայի իշխանությունները:

Բերկլիի համալսարանի տնտեսագետների ուսումնասիրությունը թույլ տվեց հետեւություն անել, որ տնտեսական ճգնաժամերը հնարավորություն են տալիս դաստիարակել առավել գիտակից սերունդ: Այդ ուսումնասիրության շրջանակներում վերլուծության ենթարկվեցին այն ամերիկացիների մասին տվյալները, որոնց մանկությունը համընկել է Մեծ դեպրեսիայի ժամանակաշրջանին: Ինչպես պարզվեց, այդ մարդկանց մոտ կյանքի հանդեպ վերաբերմունքը տարբերվում է իրենց ծնողների եւ զավակների պահվածքից: «Դեպրեսացված» ամերիկացիներն ավելի հաճախ են հակված ֆինանսական ռիսկերից խուսափելուն (օրինակ՝ նրանք հազվադեպ են կուլ տալիս առավել խաբուսիկ առաջարկությունների խայծը), բայց հաճախակի են զումարներ ներդնում արժեթղթերի շուկայում, այլ ոչ թե դրանք պահում խնայատուփերում:

**Washington ProFile**

27.02.2009

## ՑԵՂԱԿՐՕՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՉԱՄԸ

Մեծ իմաստասեր Սոկրատեսին կը պատկանի յաւիտենական արժէք ներկայացնող պատգամի մը ձեւակերպումը – **ճանչցի՛ր քեզ**:

Ասիկա կենսական հրամայականն է, որուն ենթակայ է ամէն մէկ էակ: Նախնական շրջաններուն՝ մարդիկ բնազդօրէն ենթարկուած են այս հրամայականին: Քաղաքակրթութեան զուգընթաց՝ հետզհետէ գիտակցօրէն հետապնդուած է այս պատգամը, որ դարերու իմաստութեան մէկ խտացումն է:

**ճանչցի՛ր քեզ** խօսքերը շատ աւելի խոր իմաստ ունին, քան առաջին տպաւորութենէն կարելի է պատկերացնել:

Այս պատգամը կը նշանակէ, որ ամէն մարդ միշտ պէտք ունի ուսումնասիրելու ինքզինքը, այսինքն իւրաքանչիւր անհատ շարունակ պիտի քննէ իր կեանքին պայմանները, միւթական թէ բարոյական: Ամէն խորհող էակ պիտի հարցնէ ինքն իրեն, թէ ինչպէ՞ս եւ ինչո՞ւ կ'ապրի: Պիտի փորձէ հասկնալ, թէ ի՞նչ կ'ուզէ: Պիտի չափէ իր կարողութիւնները ու պիտի ջանայ զարգացնել զանոնք: Ականջ պիտի դնէ իր հոգիի խորէն լսուող ձայնին եւ ըստ այնմ պիտի ձեւակերպէ իր պահանջներն ու ձգտումները:

Բայց մարդ կոչուածը կայուն արարած մը չէ: Մեզմէ ամէն մէկը կը փոխուի ո՛չ միայն ամէն տարի, ամիս կամ շաբաթ, այլ ամէն օր: Մեզմէ դուրս գտնուող ուժեր կ'ազդեն ո՛չ միայն մեր արտաքին պայմաններուն, այլ եւ մեր ներքին աշխարհին վրայ: Այս կը նշանակէ, որ մենք շարունակ պէտք ունինք հետեւելու մեծ իմաստասերի պատգամին՝ **ճանչցի՛ր քեզ**:

Ո՛չ ոք կրնայ զատել իր անձը իր ընտանիքէն ու շրջապատէն: Ո՛չ ոք կրնայ իրմով սկսիլ աշխարհը: Ո՛չ միայն իր ծնողներն ու պապերը, այլ եւ պապերուն պապերը պէտք է ճանչցուին այն անձին կողմէ, որ կը փափաքի **իրապէս** ճանչնալ ինքզինքը:

Ահա՛ թէ ինչու **ճանչցի՛ր քեզ**-ը իր իսկական առումով կը նշանակէ **ճանչցիր ցեղդ**:

**ճանչցի՛ր ցեղդ**, այսինքն՝ ուսումնասիրէ՛ անոր անցեալը, ուրիշ խօսքով՝ սորվէ՛ անոր պատմութիւնը, որ քու աչքերուդ առջեւ կը բերէ անոր արժէքները, ապրումներն ու ձգտումները:

**ճանչցի՛ր ցեղդ**, այսինքն՝ **ապրէ** անոր ներկայ կեանքը, քեզի զգա՛ անոր հաւաքականութիւնը կազմող շղթային մէկ օղակը:

**Ճանչցի՛ր ցեղդ,** այսինքն՝ քո՛ւկդ համարե՛ անոր պահանջները եւ ըրե՛ կարելիդ, որպէսզի իրականութիւն դառնան անոր ձգտումները:

**Ճանչցի՛ր ցեղդ,** կը նշանակէ ուրեմն՝ ուսումնասիրե՛ անոր անցեալը, ապրե՛ անոր ներկան եւ մտահոգութեանդ առարկան դարձո՛ւր անոր ապագան:

Լրացնելու համար այս կենսական պահանջները՝ **լա՛ւ սորվէ Մայրենի Լեզուդ,** որովհետեւ անոր մոզական լապտերին լոյսը միայն յստակ կը դարձնէ ցեղիդ պատմութիւնն ու մշակոյթը:

**Ճանչցի՛ր քեզ** կը նշանակէ ճանչցի՛ր քեզի ծնունդ տուող հաւաքականութիւնը, այսինքն **ցեղդ:**

Դարերու այս հրամայականին ամենէն աւելի պէտք ունի **Հայ Նոր Սերունդը:**

**Արմենակ Բարսեղեան**

*(հատված հեղինակի «Ջեղակրօն Շարժումը»  
գրքույկից, Բոստոն, 1935թ.)*

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տեր-Հարությունյան ԲԱԶՄԱՎԵԿՏՈՐ ԳԼՈՒԲԱԼԱՑՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՔԱՌՍ	1
Ռուբեն Մելքոնյան ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ	6
Արեստակես Սիմավորյան ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ	13
Արաքս Փաշայան ՄՈՋԱՀԻԴՆԵՐԸ ԴԱՐԱԲԱԴՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ	19
Կարեն Վերանյան ԱԴՐԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ	25
Աղավնի Հարությունյան ՉԻՆԱՍՏԱՆ – ԻՐԱՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ	31
ՃԳՆԱԺԱՄԻ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	36
Արմենակ Բարսեղեան ՑԵՂԱԿՐՕՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ	43

*Շապիկին պատկերված է  
Անենուռ ամրոցը (Կիլիկիա)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Սելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ Օ1Մ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: